

37795

W 35



W 39

Կ Ա Ր Գ

Դ Պ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Ս Ր Բ Ո Յ Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի Ի

Ը Ս Տ Ա Ր Ա Ր Ո Ղ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ե Ա Ց Ց

Ի Պ Ե Տ Ս Ա Ա Ր Կ Ա Ւ Ա Գ Ա Ց Ե Ի Դ Պ Ր Ա Ց

Ե Ի Ց Ա Ի Ե Ղ Ո Ւ Ե Ժ Ի Մ Ա Ղ Տ Ո Ց Է

56795

Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1877.

**Զ Ե Կ Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն**

Էրեք մասուներ են գրոցս Գպրութեան կամ Սպասաւորութեան Սրբոյ Պատարագի, — Ա. Կարգ Դըպրութեան օրրսօրէն, Հանդերձ Յաւելուածովն, (երես 1-32-60.) — Բ. Աւուր պատշաճնն հասարակաց, (63-92.) — Գ. Պատշաճք գլխաւոր տօնից ըստ կարգի տօնացուցին, (95 154:)

Ի Յաւելուածին որ յետկոյս Գպրութեան գրոցս՝ կանոնք օրհնութեանցն ըստ այժմեան համառօտութեանց կարգեալ են:

Աստեղանիչդ \* ցուցանէ զկրկնելիս ի վերջս տանց:

Ի սկիզբն Մարգարէական ընթերցուածոց՝ ի նշանդ թ յաւել՝ Մյսպէս ասէ Տէր. եւ յԱռաքելականացն ի նոյն նշան՝ յաւել՝ Ե՛ղբարք:

Աւանդեալքն ի սովորութենէ եւ չգտեալք ուրեք ի գիրս՝ ի փակագծի յաւելեալ են:



ՀԱՄԱՐՈՏՈՒԹԻՒՆՔ

Աձն. Աստուածածնի.  
 աղ. աղօթք.  
 աղց. աղանջացից.  
 առք. առաքելական.  
 աւետ. աւետարան.  
 դպ. դպիրք.  
 եր. երես.  
 ընթ. ընթերցանութ.  
 խշ. խաշի.  
 ծն. ծննդական.  
 կց. կցորդ.  
 չյրպ. չայրապետաց.  
 ճշ. ճշտոս.  
 մես. մեսեյի.  
 մղթ. մաղթանք.  
 մրդ. մարգարեական.  
 մրտ. մարտիրոսաց.  
 յին. յինանց.  
 յիան. յիանական.  
 շբպճ. շարքաթարգմանից.  
 շք. շարական.  
 պճ. պատկոց.  
 սղմ. սաղմոս.  
 սրկ. սարկանաց.

վ. վերջ.  
 փխ. փոխ.  
 քճն. քահանայ.  
 քրզ. քարոզ.

ՈՒՆՅԱՆԻՆ:

աձ. առաջին ձայն.  
 ակ. առաջին կողմ.  
 բձ. երկրորդ ձայն.  
 բկ. առաջ կողմ.  
 դձ. երրորդ ձայն.  
 դկ. զուտ ձայն.  
 ղձ. շարքորդ ձայն.  
 ղկ. վերջ ձայն.  
 ստ. ստեղծ.

ԱՐԻՊԵՆ:

կեր. կիրակի.  
 բշ. երկուշաբաթի.  
 դշ. երեքշաբաթի.  
 դշ. չորեքշաբաթի.  
 եշ. օրհորշաբաթի.  
 ուր. ուրբաթ.  
 շբ. շաբաթ.

Ա.

ԿԱՐԳ ԳՊՐՈՒԹԵԱՆ

ՕՐԸՍՕՐԷՆ

ՎՐԻՊԵՆ

Երես 82. Առաքելոց առաջին սղմ. փոխանակ Ուէն Բառնի.  
 Կց. Ընդամենայն երկիր եւ բարբառ նոցա. եւ մինչեւ  
 ի ճագս աշխարհի են խօսք նոցա: Փխ. Երկինք պատմ:

## ԿԱՆՈՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ.

Գնի Սրբո-ւիւնն ի Բաղնոցի՝ ի սորբ սեղանն: Ե-  
փն զդիւրսն եղանակէն զՏալ Բաշխմանն՝ Բահա-  
նայն խնկարկէ:

Տալ:

Մայր Հաւատոյ սուրբ Հարմարան. Եւ ա-  
ռագաստ գերազրական. Տուն փեսայիդ անմա-  
Հական. Որ զարգարեաց զքեզ անվախձան:

Ձայլ Գոռնն Գես յերես 36:

Աղբիւ:

Տէր Աժ բարձրեալ ամենակալ. Լոյս անքնին,  
մեծութիւն զհեղ. Ե-այլն: Գու. Ա՛մէ՛ն:

Հովիւ քաջ եւ առաջնորդ բանաւոր Հօտի,  
Հայեաց զթութիւն. Ե-այլն: Գու. Ա՛մէ՛ն:

Գու. Աստուած մեր. եւ Տէ՛ր մեր. Երեւե-  
ցաւ մեզ: Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Եւ Բահանայն Բարչրայոցանէ զՍրբո-ւիւնն  
այնիւրեւ ժողովրդեանն, Եւ Խաչակնիւ սեւեւով.

Կեցո՛ Տէր զժողովուրդս քո եւ օրհնեա՛ ՚  
զժառանգութիւնս քո. Հովուեա եւ բարձրաց  
զոտս յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Հարական Գ.2:

Յաստուածային կայծակունն. ի սրովբէից  
անհրպեւին. Անմարրայէս մերձեցաք. գնկար-  
տապան քո՛ւմ խորհրդոյդ. Հնորհեա ըզնոյն  
մարբութեամբ. ի թողութիւն մեզաց մերոց:

## ՎԱՐԳ ԳՊՐՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ՊԵՏԱՐԱԳԻ.

ՅԱՒԵԼՈՒՆԾ.

Օրհնեալ գովեալն ըստ խորհրդոյ աւուրն:

Երգք, շարականք, տաղ ճաշակման սրբոյ Խոր-  
հրդոյն:

Կարգ Հայրապետական պատարագի:

Կարգ Ննջեցելոց պաշտաման պատարագի. — Եւ  
Պաշտոն Հանգստեան ննջեցելոց:

Իսկ ի մէջ պահս փոխանակ պաղին ասի ողբայայն

Սաղմոս Ծ:

Ողբմեա ինձ Աստուած. ի լման. երես 157:

Փառք Հօր եւ: Այժմ եւ միշտ:

Ե- յեդ Օրհնութեանն փոխանակ շարականին՝

Երբ:

Թագաւորն արարածոց. զհացըն կենաց եա  
քաղցեցց. Եւ ըզբաժակն ուրախարար. ոճք յԱ-  
դամայ արբամեցեցց. Այսնոր ուխտ է իմնյ ա-  
րեան. փոխան հընոյ ուխտին արեան. Չոր յիշա-  
տակ իմ առնիցէք. մինչեւ եկից ես միւսանդամ:

Թողովեալքս ի քէն հայցեմք. ընդ ժողով-  
եալ մեռասանին. Յոր զկենարարըք քո մարմին.  
բաշխեալ ետուր ընդ բաժակին. Շնորհեան եւ  
մեզ Տէր ընդ նոսին. հաղորդ լինել քում սեղա-  
նին. Կենաց հացիդ յոր փոփաղիմք. եւ ըմպել-  
ւոյդ ում ծարաւիմք:

ԱՍՏՈՒԱԹԱԹԱՆԻ

Մայր սբ սքանչելի լուսոյն, որ զԱստուածն  
ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր.  
եւ զնծութի աշխարհի ծնար զԲանն Աստուած.  
աղաչեմք: Մայր սբ բարեխօսեա:

\* Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմնա-  
ցեալն Աստուած. — Որ խոնարհեցաւ ի հայրա-  
կան ծոցոյ. էառ մարմին բառ մարդկային բնու-  
թեանս՝ առնել խաղաղութիւն յերկինս եւ յեր-  
կրի. աղաչեմք: Մայր սբ բարեխօսեա:

Աղաչեա. Կերել մեզ, անտես առնել զյան-  
ցանս մեր. եւ տալ օգնականութիւն ընդդիմա-  
կաց լինել հակառակամարտիցն ի պատերազմի.  
աղաչեմք: Մայր սբ բարե:

Աղաչեա. Զի լուեցեան պատերազմունք. դա-  
դարեցին յարձակմունք թշնամեաց. տնկեցի  
սէր եւ արդարութի յերկրի. աղ: Մայր սբ բարե:

Աղաչեա. Աճեցուցանել յերկրի մերում  
զքաղցր բխումն աղբերաց. զառատ պտղաբերութի  
բուսոց եւ տնկոց առ ի զուարճալի լինել ամ հար-  
կաւոր պիտոյից մերոց. աղաչեմք: Մայր սբ բարե:

Աղաչեա. Զի միաբանեցեղ զեկեղեցի իւր  
սուրբ, շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ  
մարգարեից, պահել անարատ մինչեւ յօր երեւե-  
լոյ դալսեան իւրոյ. աղա: Մայր սբ բարե:

Աղաչեա վասն մեր սրբուհի զմիածին քո  
զՈրդին եւ վասն հոգւոցն հանգուցելոց՝ ընդ-  
ունել յարքայութիւն երկնից, եւ տալ մասն եւ  
բաժին ընդ սուրբս ամենայն. աղաչեմք:

Յիշեա Տէր եւ ողբմեա:

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ եւ  
զդործս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք:

Տուր մեզ Տէր Աստուած մեր:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տն Աստուծոյ  
ամենակալին յանձն արասցուք:

Քեզ Տեսունդ յանձն եղիցուք:

Ողբմեաց մեզ Տէր Աստուած մեր բառ մեծի  
ողբմութեան քում. ասացուք ամենեքեան  
միաբանութեամբ:

Տէր ողբմեա. Տէր ողբմեա. Մայր սուրբ  
բարեխօսեան առ Տէր վասն մեր:

Շարական Աստուածաբանի .

ԲԶ. Անկանիմք առաջի քո Աստուածածին . եւ աղաչեմք զանարատ զկոյսդ : Բարեխօսեա վասն անձանց մերոց . եւ աղաչեա զմիածին Որդիդ : Փրկել զմեզ ի փորձութենէ . եւ յամենայն վտանգից մերոց :

ԳԿ. ՍՏ. Սրբուհի Մարիամ , սափոր սկի եւ տապանակ կտակարանաց . որ զի վերուստ զՏայն կենաց պարգեւեցեր քաղցեալ բնութեանս . առնա միշտ բարեխօսեա վասն քառութեան մեղաց մերոց :

Ս. Գրեգորի Լուսաւորի .

ԳԿ. Իիւծելոցս մեղօք տառապեալ որդեացս . աստուածագութ ծնող Տայր Գրիգորիոս . Տայնմամբ աղօթիւք առ Հայրն երկնաւոր խնդրեա . կատարել զընթացս մեր ուղղափառութեամբ :

Ս. Յակոբայ Մձբնայ Հայրապետի .

ԳԶ. Սուրբ ես Տէր եւ ի սուրբս Հանգուցեալ . բարեբանեալ ի վերին զօրաց եւ ի սրբոց քոց . Տէր Աստուած Տարցն մերոց : Զարժանահաս մահ տարժամ ի ցամանէ քում հրամանի . բարձ ի մէջ բարեխօսութեամբ եւ աղօթիւք սրբոյն Յակովբայ . Տէր Աստուած Տարցն մերոց : Ի քէն Տայնեմք զօգնութիւն ամենասուրբ Երրորդութիւն . օգնեա մեզ ի նշնութեան մերում . բարեխօսութեամբ եւ աղօթիւք սրբոյն Յակովբայ . Տէր Աստուած Տարցն մերոց :

ԿԱՐԳ ԳՂՐԱՌԹԵԱՆ

Ս Ր Բ Ո Յ Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի

Շարական զբարաորութեան պարարգի . ԴԶ :

Լսորհուրդ խորին անհաս անբակիղեն . որ զարդարեցեր զվերին պետութիւնս . ի յառազնստ անմատոյց լուսոյն . զերապանձ փառօք զդասըս հրեղենաց :

Անձառահրաշ զօրութեամբ . ստեղծեր զԱդամ պատկեր տիրակամն . եւ նազելի փառօք զգետաւորեցեալ . ի դրախտն Արեւի տեղի բերկրանաց :

Չարչարանօք քոյ սուրբ միանձնիդ . նորդեցան արարածք ամենաձյն . եւ վերջստին մարդն անմահացալ . զարդարեալ ի զգեօտ անկողնպտելի :

Անձրեւածին բաժակ հրահոտան . որ հեղար յառաքեալսն ի սուրբ վերնատանն . հեղ եւ ի մեզ Հոգիդ սուրբ Աստուած . ընդ պատմունձանին զքո զմանստութիւնդ :

Տան քում վայելէ սրբութիւն . որ ըզգեցոր ըզվայելութիւն . սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ . պատեա ըզմէջս մեր ճիշմարտութեամբ :

Որ զարարչադորձ բազմեկրս քո . տարածեցեր ընդդէմ անտեղանց . հաստատեալ զբազու-

կըս մեր կարողութեան մը. համբարձմամբ  
ձեռաց առ քեզ միջնորդել:

Ինչամամբ թագի գլուխ. պատեսցես ըզ-  
միտս եւ զըզգայարածն. խաչանիշ ուրարամբ  
ըստ Ահարոնի<sup>ս</sup>. ծաղիկեալ ոսկեթեւ է ի  
զարդ խորանի:

Բամից բոլորից. տիրապէս անպետականժն.  
նափորտապատ սիրով զմեզ զգետաւորեցե՞ր.  
քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր:

Եւ լուսնայ Կահանայն ղչեա: (Եւ դարնայ Ե-  
կեմբ զժողովուրդն խաչի:)

Կց: Թագաւոր երկնաւոր. զէկեղեցի քո  
անշարժ պահեա. եւ զերկրպանդնս անուանըդ  
քում պահեա ի խաղաղութեան:

Մաղխանք:

Քհ. Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին  
Տէր ընկալ զաղաչանս մեր, եւ կեցո զմեզ:

Քարոյ:

Սրէ. Սուրբ զԱստուածածնին եւ զամենայն  
սուրբս բարեխոս արացուք առ Հայր յերկինս,  
զի կամեցեալ ողորմեցի, եւ զթացեալ կե-  
ցուցէ զարարածս իւր: Ամենակալ Տէր Աս-  
տուած մեր. կեցո եւ ողորմեա:

Աղջիկ:

Քհն. Ընկալ, Տէր, զաղաչանս մեր բարե-  
խօսութեամբ սուրբ Աստուածածնին, անարատ

ճնուղի միածնի Որդւոյ քոյ, եւ աղաչանօք  
ամենայն սրբոց քոց, (եւ որոց կամ որոյ այսօր է  
յիշատակ: ) Լուր մեզ Տէր եւ ողորմեա. ներեա,  
քաւեա եւ թող զմեզս մեր: Արժանաւորեա  
գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ  
եւ ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւ-  
իտեանս յաւիտենից. ամէն:

Եւ խոնարհեալ առաջի այլ Կահանայն առ-  
ընկեր կացելոյ ասէ.

Խոստովանիմ առաջի Աստուծոյ, եւ սրբու-  
հւոյ Աստուածածնին, եւ առաջի ամենայն  
սրբոց, եւ առաջի ձեր հայրք եւ եղբարք, զա-  
մենայն մեզս զոր գործեալ եմ: Քանզի մեզայ  
խորհրդով, բանիւ եւ գործով, եւ ամենայն  
մեզօք զոր գործեն մարդիկ. մեղայ. մեղայ:  
Աղաչեմ զձեզ, խնդրեցէք վասն իմ Աստուծոյ  
զթողութիւն:

Պարասխանէն որ մերջ էն.

Ողորմեցի քեզ Աստուած հօրն, եւ թո-  
ղութիւն շնորհեցէ ամենայն յանցանաց քոց,  
անցելոյն եւ այժմուս, եւ յանաջիկայէն փր-  
կեցէ զքեզ. եւ հաստատեցէ յամենայն գործս  
բարիս. եւ հանդուցէ զքեզ ի հանդերձեալ  
կեանս. ամէն:

Պարասխանէ Եւ Ինքն

Քհն. Ազատեցէ եւ զձեզ մարդասերն  
Աստուած, եւ թողէ զամենայն յանցանս ձեր.  
տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ  
զբարիս: Ուղղեցէ եւ զառաջիկայ կեանս ձեր  
շնորհօք սուրբ Հոգւոյն, հօրն եւ ողորմածն:  
Եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Գոյ. Յիշեօջեր եւ զմեզ առաջի անմահ գառինն Աստուծոյ:

Քհն. Յիշեալ լիջիք առաջի անմահ գառինն Աստուծոյ:

Սաղմոս ԳԹ:

Գոյ. Ազդակեցէք առ Տէր ամենայն երկիր. ծառայեցէք Տէառն ուրախութեամբ:

Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծաներուք զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար զմեզ եւ ոչ մէք էաք. մէք ժողովուրդք եւ խաչն արօտի նորա:

Մտէք ընդ դրօնս նորա խոստովանութեամբ. եւ օրհնութեամբ ի յարկս նորա:

Խոստովան եղերուք Տէառն. եւ օրհնեցէք զանուն նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քարոզ:

Սրէլ. Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Աղբիւ:

Քհն. Ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածրնկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիրզիւ երկիր պաղանեմք. զսուրբ, զհրաշարի եւ զյողթող

(զյարութիւնդ\*) քո փառաւորեմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոս ԽԲ:

Քհն. — Կց. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ. առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Սրէլ. — Փի. Գաստ արա ինձ Աստուած. եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

Քհն. Յազգէ որ ոչ է սուրբ. ի մարդոյ մշակուորէ նենգաւորէ փրկեա զիս:

Սրէլ. Դու Աստուած հզօրիչ իմ ես, ընդէր մտացար զիս. ընդէր արտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Քհն. Առաքեա Տէր զլոյս քո եւ զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ, եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

Սրէլ. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ. առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Քհն. Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած, Աստուած իմ:

Սրէլ. Արդ ընդէր արտում ես, անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Քհն. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Սրէլ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

\* Ըստ խորհրդոյ աւուրն. տես երես 32:

Քարոզ:

(Եւ եւս խաղաղութեան զՏէր պաշտօնացուք:)

Օրհնեցուք զամենակալն Աստուած զՀայր Տեառն մերոյ Յնի Քնի. որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոյ՞ փառաբանութեան, եւ երգել զերգս հոգեւորս: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Աղօթ:

Քն. Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոյ՞ փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս, առաջի աստուածքնկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ սեղանոյս խնարհեալ երկիւղիւ երկիր պազանեմք. զսուրբ, զհրաշալի եւ զյաղթող (զյարութիւնդ) քո օրհնեմք եւ փառաւորեմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ:

Եւ ապա յգեն զխարաբոյրն:

Եւ դպիրքն եղանակն Մեղեդի խորհրդաւոր կամ Տաղ, զոր յառօր պատշաճն պեսցես: Ջրնարեալն պէս յերես 40:

Եւ Բանան զխարաբոյրն:

Շարահան խնկարկոմեան պարարագի. ԳՎ:

Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեսնորն տաճարիս. ժողովեալքս անտանօր ի խորհուրդ պաշտման պազատանաց առաջնկայ սուրբ պատարագիս. խրնկօք անուշիւք խումբ առեալ պարեմք ի վերնայարկ սրահնք խորանիս: Ուղղութեամբ ընկալ զաղօթս մեր. որպէս բուրումն

անուշահոտ խրնկոց տաշխից եւ կի՛նամոնաց. եւ ըզմատուցողքս պահեա՛ սրբութեամբ միշտ եւ հաննպաղ քեզ սպասաւորել: Բարեխօսութեամբ մօր քոյ եւ կուսի. ընկալ զանաշանս քոյ պաշտօնեից:

Ո՛ր գերադոյն քան զերկինքս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի՛ն անբեմբ քով Քրիստոս. եւ ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զբառս առաքելոց եւ մարգարեից սուրբ վարդապետաց: Այսօր ժողովեալ դասք քահանայից սարկաւանգաց դրպրաց եւ կղերիկոսաց. խննկ մատուցանեմք առաջն քո Տէր յօրինակ ըստ հրնումբն Չաքարիայ. ընկալ առ ի մենջ ըզերնկանուէր մաղթանս որպէս զպատարագն Աբելի՛ զնոյն եւ զԱբրահամն: Բարեխօսութեամբ վերին քոյ զօրացդ. միշտ անշարժ պահեա՛ զաթոս հայկազնեայց:

Խրնկա յոյժ դուստր լուսոյ մայր սուրբ կաթնոյնկէ մանկամբք քո Սինն. զարդարեալ պրճնեաց հարսն պանծալի երկնանրման ըւսանձեմ խորան: Ջի օձեան Աստուած Ինն ի յԷն անծանխապէս ի քեզ միշտ պատարագի. Հօր ի հանտութիւն մեզ ի քաւութիւն բաշխե՛ զմարմին եւ զարիւն իւր սուրբ: Ասան իւր կատարմանն սուրբ անօրէնութեան. շնորհել զթողութիւն կանգնողի տաճարիս:

Այ. Չաննպական կոյսն Մարիամ Աստուածածին խոստովանի՛ սուրբ եկեղեցի. ուստի

տըւաւ հացն անմահութեան եւ բաժակ մեզ  
նրախարար. տո՛ւք օրհնութիւն նրմա՞ հոգեւոր  
երգո՛ւլ:

Ե- սարիսաֆն յայնէ. Օրհնեա տեր:

Քհն. Օրհնեալ թագաւորութիւնն Հօր  
եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ե- սսէն Ժամանոս ըստ պարշաճի սոսրն:

Ժամամուտք:

Աստուածաձայնի եւ Ծննդէան:

Ա. Աստուածաձայն ամէնօրհնեալ, զԳանն  
անսկիզբն յղացար, եւ զԱստուածն անբով-  
անդակելին ծնար. զանպարագրելին ի գիրկս  
քո բարձեր. նմա անդագար բարեխօսեա վասն  
անձանց մերոց:

Բ. Աստուածաձայն զքեզ խոստովանեալ  
երկրպագէ եկեղեցի ուղղափառաց, քանզի ուր  
քերովբէքն բազմաչեայք եւ աթոռք հրանիւթք  
եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխէին,  
կրեցեր անսերմնապէս յանապականումն ի յար-  
գանդի քում որպէս աղախին զՏէր, եւ ծնար  
որպէս մարդ զԱստուածն բոլորից՝ զմարմնա-  
ցեալն առ ի քէն զանճառ զԳանն, ի փրկու-  
թիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Գ. Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ  
Աստուածաձայն, բարձրելոյն զօրութեամբն հով-  
անաւորեալ եւ սուրբ Հոգւոյն եկաւորու-

թեամբն լուսաւորեալ. որ զամենայն գոյու-  
թեանց ստեղծիչն յղացեալ ծնար անճառա-  
պէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա  
կեցուցանել զանձինս մեր:

Եկեղեցոյ:

Զխաղաղութիւն շնորհեա եկեղեցւոյ քում  
սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի  
թշնամեաց պատերազմէ. եւ հաստատեա ի մի  
հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստով-  
անիմք Տէր եւ Աստուած. կեցո զմեզ:

Խաչ:

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քոյ  
անկանիմք երկրպագելով, եւ խնդրեմք զթողու-  
թիւն յանցանց մերոց. քանզի սովաւ բարձեր  
զդատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ  
վասն սրբոյ աստուածային քոյ նշանի՝ շնորհեա  
զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշ-  
խարհի:

Զայլ Ժամանոսս յասոր պարշաճան րէս:

Ե- յասարդամն երգոյն տարղեացի

Սրի. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչես-  
ցուք. ընկալ, կեցո եւ ողորմեա: Օրհնեա տեր:  
Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որ-  
դւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն չ՝ ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրի. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Աղբիւր:

Քհն. Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է եւ փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է եւ զթութիւնդ անբաւ: Դու ըստ առատ մարգասիրութեան քում նայեա ի ժողովորդս քո եւ ի տաճարս յայտ սուրբ: Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթականս մեր առատապէս զողորմութիւն քո եւ զզթութիւն: Զի քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ մշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ասի ճաշու Փոխի եւ Շարայանն ըստ պարզանի առարն:

Սրի. Օրհնեա տէր:

Քհն. Զի քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Եւ հասիւրեացեն զսեղանն:

Սրի. Վերացուցանէ զաւարանն, եւ յայնէ բարձր. Պաշտումէ:

Եւ ասեն շարեւրբեանն յայնիւ:

Դպ. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ. ողորմեա մեզ. երբիցս:

Քարոյ:

Սրի. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեացուք: Դպ. Տէր ողորմեա:

Վասն խաղաղութեան ամ աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեացուք: Դպ. Տէր ողորմեա:

Վասն ամ սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց զՏէր աղաչեացուք: Դպ. Տէր ողորմեա:

Վասն սրբազան Պապին մերոյ Տեառն այս անուն կենաց եւ փրկութեան հոգւոյ նորին զՏէր աղաչեացուք: Դպ. Տէր ողորմեա:

Վասն Հայրապետին մերոյ Տեառն այս անուն (կաթողիկոսի) կենաց եւ փրկութեան հոգւոյ նորին զՏէր աղաչեաց: Դպ. Տէր ողորմեա:

Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւազաց, դպրաց, եւ ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ զՏէր աղաչ: Դպ. Տէր ողորմեա:

Վասն բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց, զօրավարաց եւ զօրաց նոցին զՏէր աղաչեացուք: Դպ. Տէր ողորմեա:

Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին զՏէր աղաչեացուք: Դպ. Յիշեա Տէր եւ ողորմ:

Սրի. Եւ եւս եւ վասն միաբանութեան ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեացուք: Դպ. Տէր ողորմեա:

Սրի. Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սրի. Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում: Ասացուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպ. Տը ողորմեա. Տը ողորմեա. Տը ողորմ:

Սրի. Օրհնեա տէր:

Քհն. Զի ողորմած եւ մարգասէր էս Աստուած զոլով. եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ:

(Եւ դենն գորհալուն):

Եւ սխանին ճաշու Սաղմոսն առաջինն է յայն. եւ ընթեանն զգիրս մարգարեականս եւ արտ-

իւլանս ըստ խորհրդոյ սոսորն. եւ զինի՛ Ալէլու-  
ըստ ցոցանելոյ Ընկերացոսոսոյն: Եւ յաւարտման  
Ալէլուին Բարձր յայնի՛ Գոյն

Սրի՛. Օրթի՛:

Խաղաղութիւն ՚ի ընդ ամենեսեան:

Գոյ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրի՛. Երկիւղածութեամբ լուարուք:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ (Մատթէոսի):

Գոյ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սրի՛. Պառսխումէ:

Գոյ. Ասէ Աստուած:

Եւ սարկաւանի խորհոյ զԱւետարանն:

Եւ յաւարտելն ասացելն ասելեւեան.

Գոյ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Եւ սպասան զՀաւարտման: (Եւ խոսնի ասելն:)

Սրի՛. Հաւատամք ի մի Աստուած Հայրն  
ամենակալ, յարարին Երկրի եւ Երկրի, Երեւ-  
ելեաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին  
Աստուծոյ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածինն ասի  
քան զամենայն յաւիտեանս: Աստուած յԱս-  
տուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱս-  
տուծոյ ճշմարտէ ծնունդ եւ ոչ արարած: Կոյն  
ինքն համազոյակից Հօր, որով ամենայն ինչ  
եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, Երեւելիք  
եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան  
եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝  
մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս  
ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով:  
Որով էառ մարմին, հոգի եւ միտս, եւ զամենայն  
որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւ-  
ուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մար-  
մնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին  
մարմնովն եւ փառք Հօր՝ ի դատել զկենդանիս  
եւ զմեռեալս: Որոյ թագաւորութեանն ոչ գոյ  
վախճան:

Հաւատամք եւ ի սուրբ Հոգին յանեղն եւ  
ի կատարեալ, որ ի Հօրէ եւ յՈրդւոյ բխէ: Որ  
խօսեցաւ յօրէնս եւ ի մարդարէս եւ յաւե-  
տարանս: Որ էջն ի Յորդանան. քարոզեաց  
զառաքեալն, եւ բնակեցաւ ի սուրբն:

Հաւատամք եւ ի մի միոյն յընդհանրական  
եւ յառաքելական եկեղեցի: Ի մի մկրտութիւն:  
Յապաշխարութիւն՝ ի քաւութիւն եւ ի թողու-  
թիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց: Ի դատաս-  
տանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց: Յարքայ-  
ութիւն Երկնից եւ ի կենանն յաւիտենականս:

Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ոչ էր  
Որդի, կամ որ երբեմն յորժամ ոչ էր սուրբ  
Հոգի. կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ  
էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ  
կամ զսուրբ Հոգին. եւ թէ փոփոխելի են կամ  
սլլայլլելի, զայնպիսիսն նոյմէ կաթուղիկ եւ  
առաքելական եկեղեցի:

Սրի՛. Օրհնեա տեր:

Քհն. Իսկ մէք փառաւորեսցուք որ յանաջ  
քան զյաւիտեանս երկիր պազանելով սրբոյ  
Երրորդութեանն եւ մի Աստուածութեանն Հօր  
եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. ամէն: (Եւ համբոս-  
րէ զԱւետարանն սորբի):

Քարոյ :

Սրի՛. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա-  
չեացուք :

Իպ. Տէր ողորմեա :

Եւ եւս հաւատով աղաչեացուք, եւ խըն-  
դրեացուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի փրկչէն  
մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՛ ի ժամուս պաշտման  
եւ աղօթից : Չի արժանի ընդունելութեան  
արասցէ, լուիցէ ձայնի աղաչանաց մերոց : Ըն-  
կալցի զննդրուածս սրտից մերոց, թողցէ զյան-  
ցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր : Աղօթք մեր  
եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի  
մեծի տէրութեան նորա : Եւ նա տացէ մեզ միա-  
բան միով հաւատով, արդարութի՛ք վաստակել  
ի գործս բարիս : Չի զողորմութեան զնորճան  
իւր արասցէ ի վերայ մեր Տէրն ամենակալ.  
կեցուցէ եւ ողորմեսցի :

Իպ. Կեցո Տէր :

Չժամս սուրբ պատարագիս եւ զառաջեկայ  
օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի  
Տեառնէ խնդրեացուք :

Իպ. Շնորհեա Տէր :

Չհրեշտակ խաղաղութեան պահպան ան-  
ձանց մերոց ի Տննէ խնդր : Իպ. Շնորհեա Տէր :

Չքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց  
մերոց ի Տեառնէ խնդր : Իպ. Շնորհեա Տէր :

Չսրբոյ խաչին մեծ եւ կարող զօրութիւնն  
յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ խըն-  
դրեացուք :

Իպ. Շնորհեա Տէր :

Եւ եւս եւ վն միաբանութի՛ն ճշմարիտ եւ սի՛  
հաւատոյս մերոյ զՏր աղա :

Իպ. Տէր ողորմեա :

Չանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ  
ամենակալին յանձն արասցուք :

Իպ. Քեզ Տեառնդ յանձն եղեցուք :

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի

ողորմութեան քում : Ասացուք ամենեքեան  
միաբանութեամբ :

Իպ. Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողոր-  
մեա :

Սրի՛. Օրհնեա Տէր :

Քհն. Որպէս զի արժանաւորք եղեցուք գո-  
հութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ  
սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից. ամէն :

Խաղաղութիւն ՚ի ամենեցուն :

Իպ. Եւ ընդ հոգւոյդ քում :

Սրի՛. Աստուծոյ երկրպագեացուք :

Իպ. Առաջի քոյ Տէր :

Աղբի՛ :

Քհն. Խաղաղութեամբ քով Քրիստոս փըր-  
կիչ մեր, սր ի վեր է քան զամենայն միտս եւ  
զըանս, ամբացո զմեզ եւ աներկիւզ պահեա  
յամենայն շարէ : Հաւասարեա զմեզ ընդ ճըշ-  
մարիտ երկրպագուս քո, ողբ հոգւով եւ ճըշ-  
մարտութեամբ քեզ երկիր պագանեն : Ամանդի  
ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք  
իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ :

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս :

Իպ. Ամէն :

Սրի՛. Օրհնեա տեր :

Քհն. Տէր Աստուած օրհնեսցէ ՚ի զամենե-  
սեանդ :

Սրի՛. Մի՛ ոք յերեկայից, մի ոք ի թերա-  
հաւատից, եւ մի ոք յապաշխարոզաց եւ յանմա-  
քրից մերձեացի յաստուածային խորհուրդս :

Իպ. Մարմին տէրունական եւ արիւն փրկի-  
չական կացցէ առաջի : Երկնային զօրութիւնքն :

յաներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ  
բարբառով. նբ, նբ, նբ, Տէր զօրութեանց:

Սբի. Սաղմոս ասացէք Տն Այ մերոյ, դպիրք,  
ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս:

Ե- դպիրքն եղանակն Վրբասացո-նի-նն ըսո  
խորհրդոյ առ-րն:

Սրբասացութիւնք:

Կի-ր-ի-է-ն-ն ե- Ե-ի-է-ն-ն-ոյ:

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աս-  
տուած զքո սուրբ զեկեղեցի: Հազարք հազա-  
րաց հրեշտակապետք կան առաջի քո, եւ բիւրք  
բիւրոց հրեշտակք պաշտեն զքեզ Տէր: Եւ ի  
մարդկանէ հաճեցար ընդունել զօրհնութիւնս  
ձայնիւ խորհրդականաւ. սուրբ, սուրբ, սուրբ.  
Տէր զօրութեանց:

Չննդեան ե- Աստուածաշնչի:

Բազմութիւնք հրեշտակաց եւ զօրաց եր-  
կնաւորաց իջեալ ի յերկնից ընդ միածին թա-  
գաւորին: Որք երգեին եւ ասեին. սա է Որդին  
Աստուծոյ: Ամենքեան ասացուք. ուրախ լե-  
րուք երկիրք, եւ ցնծացեն հիմունք աշխարհի.  
զի Աստուածն յաւիտենական ի յերկրի երեւ-  
եցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուցեց  
զանձինս մեր:

Ձայլ սրբասացո-նի-նն յառ-բ պարշաճան րեւ:

Ե- ի սարկաւաբացն վերաբերեցին ընծային ի  
նկանն սուրբ: Բայց ին հանդիսաւոր օր լինի, ե-  
զխորհուրդն վերաբերել իսօնցին, զարարողո-նի-նն  
րեւ ի վայր, յերեւ 42:

Քարոյ:

Սբի. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեա-  
ցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Նւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք  
յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ  
ասիւ: Մի խղճիւ եւ գայթաղութեամբ, մի  
նենգութեամբ խորամանկութեամբ, մի պա-  
տրանօք եւ խաբէութեամբ, մի երկմտութեամբ  
եւ մի թերահաւատութեամբ: Այլ ուղիղ  
վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատա-  
րեալ հաւատով, լցեալ սիրով, լի եւ առաւե-  
լեալ ամենայն գործովք բարութեան՝ կացցուք  
յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ. եւ  
գտցուք զողորմութեան զնորհո՛ւ յաւուր յայ-  
տնութեան եւ ի միւսանգամ գալստեան Տեառն  
մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Կեցուցե  
եւ ողորմեացի: Դպ. Կեցո Տէր եւ ողորմեա:

Սբի. Օրհնեա տեր:

Քնն. Շնորհօք եւ մարդասիրութեամբ  
Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի.  
ընդ սրում քեզ Հօր միանգամայն եւ Հոգւոյդ  
սրբոյ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ,  
այժմ եւ միշտ եւ յաւիտենան յաւիտ:

Խաղաղութիւն ք ամենեցուն:

Դպ. Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:

Սբի. Աստուծոյ երկրպագեցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Սբի. Ողջոյն սուք միմեանց ի համբոյս օրո-  
թութեան. եւ որք ոչ էք խորոյ հաղորդիլ աս-  
տուածային խորհրդոյս, առ դրունս ելէք եւ  
արթեցէք:

3795



Ե- համբարեացեն զեղանն Ե- զիտեանս:

Դպ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցի. Որ էնն Աստուած աստ բազմեցի: Խաղաղութեան ձայն հնչեցաւ. Սուրբ ողջունիս հրաման տրուաւ: Թշնամութիւնըն հեռացաւ. Սէր ընդ հանուրս սրփուեցաւ: Արդ պաշտօնեայք բարձեալ ըզձայն, Տուք օրհնութիւն ի մի բերան՝ Միասնական աստուածութեանն, Որում սրբէքն են սրբաբան:

Ո՞՞նչ Ե- զայս ասեն ի հանդիսի րօնի:

Սբէ. Որք հաւատով կայք յանդիման Սուրբ սեղանոյս արքայական. Տեսչէք բազմեալ զՔի՞ս արքայն, Եւ շուրջ պատեալ զօրք վերնական:

Դպ. Վերհամբառնամք զաչս ունելով, Եւ պաղատիմք զայս ասելով. Ըզմեղըս մեր մի յիշեացես, Այլ զբթութեամբ քո քաւեցես: Ընդ հրեշտակացն օրհնեմք ըզքեզ. Եւ ընդ սրբոց՝ Տէր փառք քեզ:

Սբէ. Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարուք կացցուք. Եւ նայեցարուք զգուշութեամբ:

Դպ. Առ քեզ Աստուած:

Սբէ. Պատարագ Քի՞ մատչի գառն Ա՛յ:

Դպ. Ողորմութիւն Եւ խաղաղութիւն Եւ պատարագ օրհնութեան:

Սբէ. Օրհնեա տէր:

Քհն. Շնորհք, սէր Եւ աստուածային սրբաբար զօրութիւնն Հօր Եւ Որդւոյ ՚ի Եւ Հօգւոյն սրբոյ եղևցի ընդ ձեզ ընդ ամենսեան:

Դպ. (Ամեն.) Եւ ընդ հոգւոյդ քում:

Սբէ. Ջգրունս, զգրունս ամենայն իմաստութեամբ Եւ զգուշութեամբ: Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ:

Դպ. Ունիմք առ քեզ Տէր ամենակալ:

Սբէ. Եւ զօհացարուք զՏեառնէ բոլորով սրաիւ:

Դպ. Արժան Եւ իրաւ:

Սբէ. Օրհնեա Տէր:

Քհն. Եւ ընդ սերբէան Եւ ընդ քերբէան միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, Եւ համարձակապէս զօչելով աղաղակել ընդ նոսին Եւ ասել:

Իսկ ի հանդիսի ասուրս ո՞՞նչ Վրժան Եւ իրաւն ասեն Ե- զայս:

Սբէ. Եւ զտոյգ փրկութեան՝ որ միշտ ընդ ամենայն տեղիս զօհութիւն մատուցանեմք քեզ Քրիստոս: (Դպ.) Որով Եւ զհրաշակ (զյարութիւնդ քո\*) զովեն զօրութիւնք: (Սբէ.) Սարսին սերովբէքն. (Դպ.) Գողան քերովբէքն: (Սբէ.) Եւ իշխանութիւնդ վերին պետութեանցն պար առեալ ձայնիւ եղանակեն Եւ ասեն:

Դպ. Սուրբ. սուրբ. սուրբ. Տէր զօրութեանց: Լի են երկիրք Եւ երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձունս: Օրհնեալ որ եկիր Եւ զայլոց Ես անուամբ Տեառն. ովսանայ ի բարձունս:

Սբէ. Օրհնեա տէր:

Քհն. Առէք կերայք... ի թողութի մեզաց:

Դպ. Ամեն:

Սբէ. Օրհնեա տէր:

\* Ըստ խորհրդոյ աւուրն. տես երես 32:

ԲՆՆ. Արբէք ի սմանէ... ի թողութի մեղաց:  
Դոյ. Ամէն:

Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ վան մեր՝ պարտապան պարտեաց մերոց. հեղմամբ արեան նորա, աղաչեմք զքեզ, ողորմեա քոյ բանաւոր հօտին:

Արհ. Օրհնեա տէր:

ԲՆՆ. Եւ զքոյս ի քոյոյս քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Դոյ. Յամենայնի օրհնեալ ես Տէր. օրհնեմք զքեզ. գովեմք զքեզ. գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ Տէր Աստուած մեր:

Արհ. Օրհնեա տէր:

ԲՆՆ. Խաղաղութիւն քի ընդ ամենեւեան:

Դոյ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Արհ. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դոյ. Առաջի քո Տէր:

Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն, հաց կենաց բաշխիս ի մեզ. հեղմամբ արեան քոյ սուրբ, աղաչեմք զքեզ, ողորմեա արեամբ քո փրկեալ հօտի:

Բանանայն խաչակիւնէ ինն անգամ՝ եւ օրհնէ զհացն սուրբ եւ զբաշխին. եւ սարկաւաքն (խնկարկէ առ ասեանայն օրհնութիւնն,) եւ ասէ ի ցաթ՝ Ամէն: Եւ ի վճար երգոյն:

Արհ. Օրհնեա տէր:

ԲՆՆ. Որպէս զի եղեցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դոյ. Հորդի Աստուծոյ, որ զփնտակցի քոյ զետրհօրդ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռս մեր. հեղմամբ արեան սորա, աղաչեմք զքեզ, հանդողհօգիս մերննջեցելոցն: (Եւ խոռնկ անէն):

Արհ. Օրհնեա տէր:

ԲՆՆ. Ընդ որս եւ մեզ այց արացես բաբերար Աստուած, աղաչեմք:

Դոյ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

ԲՆՆ. Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամն, եւ Յովհաննու մկրտչին, Ստեփանոսի նախավկային, եւ ամենայն սրբոց՝ եղեցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դոյ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սարկաւաքն յաւիտոյնն սեղանոյն յեւնասմաթ  
ասուցի:

Առաքելոց սրբոց, մարգարեից, վարդապետաց, մարտիրոսաց եւ ամենայն հայրապետաց սրբոց, առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց, եւ ամենայն սրբոց՝ եղեցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դոյ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Տերունի սուրբն եւ պահոց:

Արհ. Օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ, հրաշալի եւ աստուածադարգ (յարութեանն Բրիտոսի) երկիր պաղանեմք: Տես էրես ՅԷ:

Դոյ. Փառք (յարութեան քոյ) Տէր:

Ի դուն Արքոյն զայս ասու:

Արհ. Սուրբ եւ աստուածահաճոյ (առաքելոյն) այս անուն, որոյ այսօր զյիշատակն կատարեսցաք՝ եղեցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դոյ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Արհ. Առաջնորդացն մերոց եւ առաջին լուսաւորչացն սրբոց. Թադէոսի, եւ Բարթուղեմէոսի առաքելոցն, եւ Գրիգորի լուսաւորչին, Արիստակիսի, Արթանիսի, Յուսիանն, Գրիգորի-

սի, Ներսէսի, Սահակայ, Գանիէլի եւ Խաղայ, Մեծորպայ վարդապետին, եւ Գրիգորի նարեկացոյն, եւ Ներսէսի կլայեցւոյն: Եւ իմ օրջ հովուաց եւ հովուապետացն Հայաստանեայց՝ եղիցի յիշատակ ի օր պատարագս, աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմես:

Սբէ. Միանձնացելոց սրբոց, առաքինասէր եւ ձեռուսոց կրօնաւորացն, Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ռնոփրիոսի, աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւագրի. Յովհաննիսեանց, եւ Սիմէոնեանց, սրբոց Ոսկեանց, եւ Սուքիասանց, եւ ամենայն սրբոց հարց եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմես:

Սբէ. Թագաւորաց հաւատացելոց սրբոց, Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ, եւ Թէոդոսի, եւ ամենայն սուրբ եւ բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմես:

Սբէ. Ընդ հանուր ամենայն հաւատացելոց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, եւ իմ շափու հասակի հաւատով եւ սրբութեամբ ի Բրիտոս ննջեցելոց՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմես:

Սբէ. Օրհնեա աեր:

Քհն. Եւս առաւել զսրբազան Պապն մեր զՏԻ (այս անուն), եւ զերջանիկ Պատրիարքն (իսճ զԱբբեպիսկոպոսն) մեր զՏէր (այս անուն) շնորհեցեսու մեզ ընդ երկայնաւուրս ուղիղ վարդապետութի:

Տանիբ դի ուղղութեամբ Ընդդէմս Գիւնի լինի յիշատակ:

Եւ այս ի յախակողմն սեղանոյն բարոյեաց սարկաւանքն յեւոյն յեւոյն աղբիկց:

Քարոյ:

Պահութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք քեզ Տէր Աստուած մեր՝ վասն սուրբ եւ անմահ պատարագիս որ ի վերայ սրբոց սեղանոյս: Զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեցես: Սովա շնորհեա զսէր, զհաստատութիւն, եւ զղծալի զիսողաղութիւն ամենայն աշխարհի, սրբոց եկեղեցւոյ, եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց: Եւս առաւել սրբազան Պապին մերոյ Տեառն (այս անուն), եւ պատուական Պատրիարքին մերոյ Տեառն (այս անուն), եւ Աբբեպիսկոպոսին մերոյ Տեառն (այս անուն), եւ քահանայիս որ զպատարագս մատուցանէ: Եւ վասն զօրութեան եւ յաղթութեան թագաւորաց քրիստոնէից, եւ իշխանացն բարեպաշտից: Աղաչեսցուք եւ խնդրեսցուք եւ վասն հոգւոցն հանդուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ բարունապետացն մերոց, եւ շինողաց սուրբ եկեղեցւոյս, եւ որք ընդ հովանեաւ սորին են հանդուցեալ: Ազատութիւն եղբարց մերոց գերելոց, եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս: Հանգիստ հաւատով եւ սրբութեամբ ի Բրիտոս կատարելոցն: Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպ. Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Սբէ. Օրհնեա աեր:

Քհն. Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աս-

տուճոյ եւ փրկչիս մերոյ Յիսուսի † Քրիստոսի  
ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Դպ. (Ամեն.) Եւ ընդ հոգւոյդ քում:

Քարոյ:

Արհ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա-  
չեսցուք: Դպ. Տէր ողորմեա:

Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք, եւս  
առաւելլապէս զՏէր աղ: Դպ. Տէր ողորմեա:

Վասն մատուցեալ սուրբ եւ աստուածային  
պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս զՏէր  
աղաչեսցուք: Դպ. Տէր ողորմեա:

Արպէս զի Տէր Աստուած մեր որ ընկալաւ  
զսա ի սուրբ, յերկնային եւ յիմանալի իւր մա-  
տուցարանն, եւ զփոխանակն առաքեսցէ առ  
մեզ զչնորհս եւ զպարզեւս Հոգւոյն սրբոյ,  
զՏէր աղաչեսցուք: Դպ. Տէր ողորմեա:

Ընկալ, կեցո եւ ողորմեա եւ պահեա զմեզ  
Տը քոյին շնորհիւդ: Դպ. Կեցո Տը եւ ողորմեա:

Չամենասրբուհի զԱստուածածինն, զմիշտ  
կոյսն Մարիամ հանգերձ ամենայն սրբովք յի-  
շելով, զՏէր աղաչեսց: Դպ. Տէր ողորմեա:

Եւ եւս եւ վասն միաբանութեան ճշմարիտ  
եւ սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչես-  
ցուք: Դպ. Տէր ողորմեա:

Չանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստու-  
ծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր բա մեծի  
ողորմութեան քում: Ասացուք ամենեքեան  
միաբանութեամբ:

Դպ. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Արհ. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Սրհ. Օրհնեա տէր:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

(Եւ սարկաւաքն խոռնի աշէ:)

Եւ ողորմեա քոյն յերկնսդ եւս, սուրբ եղիցի  
անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղի-  
ցին կամք քո՝ որպէս յերկնս եւ յերկրի:  
Չհաց մեր հանապազորդ սուր մեզ այսօր, եւ  
թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք  
մերոց պարտապանաց. եւ մի տանիր զմեզ ի  
փորձութիւն. այլ փրկեա ի շարէ:

Արհ. Օրհնեա տէր:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

(Եւ սարկաւաքն խոռնի աշէ:)

Եւ ողորմեա քոյն յերկնսդ եւս, սուրբ եղիցի  
անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղի-  
ցին կամք քո՝ որպէս յերկնս եւ յերկրի:  
Չհաց մեր հանապազորդ սուր մեզ այսօր, եւ  
թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք  
մերոց պարտապանաց. եւ մի տանիր զմեզ ի  
փորձութիւն. այլ փրկեա ի շարէ:

Արհ. Օրհնեա տէր:

Քհն. Չե քո է արքայութիւն եւ զօրու-  
թիւն եւ փառք յաւիտեանս. ամեն:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Արհ. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Քհն. Եւ սուր մեզ համարձակածայն բար-  
բառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ,  
երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Դպիրքն. Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս  
Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:

Սարկաւաքն. Օրհնեա տէր:

Քահանայն. Օրհնեալ Հայր սուրբ Աստուած  
Ճշմարիտ: Դպիրքն. Ամէն:

Սարկաւաքն. Օրհնեա տէր:

Քահանայն. Օրհնեալ Որդիդ սուրբ Աստուած  
Ճշմարիտ: Դպիրքն. Ամէն:

Սարկաւաքն. Օրհնեա տէր:

Քահանայն. Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած  
Ճշմարիտ: Դպիրքն. Ամէն:

Սարկաւաքն. Օրհնեա տէր:

Քահանայն մերացոցանէ զլիկն սորբ ար-  
եաթն, եւ ասէ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ  
Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպիրքն. Ամէն: Հայր սուրբ. Որդիդ սուրբ.  
Հոգիդ սուրբ: Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ  
սրբոյ Հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից. ամէն:

Սարկաւաքն. Օրհնեա տէր:

Քահանայն մերացոցեալ զսորբ մարմինն եւ  
զարիւնն Տեառն՝ քերցել ի Գեոռնիւն ժողովրդեանն,  
եւ ասացեաւ նոսա քարշիր. ի սուրբ ի սուրբ  
պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ  
եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի ճաշակեցուք  
սրբութեամբ՝ որ իջեալ յերկնից բաշխի ի միջի  
մերում: Սա է կեանք, յոյս, չ՛ յարութիւն,  
քաւութիւն եւ թողութիւն մեզայ: Սաղմոս  
ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ. սաղմոսասացէք  
երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի  
ի կառս քերսովրեականս:

Եւ Գարշն զԼարագոյրն:

Քարշ:

Սրի. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ  
մերոյ, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերզս  
հոգեւորս: Զի սմա վայելին սաղմոսք եւ օրհ-  
նութիւնք, այլևսք եւ երգք հոգեւորք: Պաշ-  
տօնեայք հանդերձ երգով սաղմոս ասացէք, եւ  
զՏէր յերկինս օրհնեցէք:

Դպ. Օրհնեալ է Աստուած:

Երգ:

Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի  
մերում. այլևսիս:

Զմարմին իւր տայ մեզ կերակուր. եւ սուրբ  
զարիւն իւր ցօղէ ի մեզ. այլևսիս:

Մատիք առ Տէր եւ առեք զլոյս. այլևսիս:  
Ճաշակեցէք եւ տեսէք զն քաղցր է Տէր.  
այլևսիս:

Օրհնեցէք զՏէր յերկինս. այլևսիս. օրհ-  
նեցէք զնա ի բարձունս. այլևսիս:

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորս.  
այլևսիս. օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք  
նորս. այլևսիս:

Զայլ երգս Գեո յերեւ 34:

Բաշխման սրբոյ Խորհրդոյն:

Քարշն զԼարագոյրն յեր:

Սրի. սահման զլիկն եւ դառնայ առ ժողովրդեանն  
ասելով քարշիր. Երկիւղել եւ հաւատով յառաջ  
մատիք, եւ սրբութեամբ հաղորդեցարուք:

(Ասացէք՝ մեզայ Աստուծոյ: Հաւատամ ի  
Հայր սուրբ յԱստուած Ճշմարիտ: Հաւատամ ի  
Որդի սուրբ Աստուած Ճշմարիտ: Հաւատամ ի

Հողի սուրբ Աստուած ճշմարիտ: Խոստովանիմ  
եւ հաւատամ զի սա է ճշմարիտ մարմին եւ  
արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ  
բառնայ զմեզս աշխարհի:)

Ե- առնայն արժանաւոր շողովորդքն հաղորդին.  
(ղարականան՝ յերես 35:) Ե- յետ հաղորդելոյն՝

Գոյ. Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ  
մեզ: Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Քնն. Խաչակնիք շողովորդքն ասելով Քարչք.  
Կեցո Տէր զժողովուրդս քո. եւ օրհնեալ զժա-  
ռանդութիւնս քո. հովուեա եւ բարձրացո զսո-  
սս յայսմհետեւ մինչեւ յաւիտեան:

Ե- դարչեալ Գարչեւ շողովորդքն:

Գոյ. 1 յարք ի բարութեանց քոց Տէր. ճա-  
շակելով զմարմին քո եւ զարիւն: Փառք ի  
բարձունս կերակրողիդ զմեզ:

Որ հանապաղ կերակրես զմեզ. առաքեա ի  
մեզ զհոգեւոր քո զօրհնութիւնդ: Փառք ի  
բարձունս կերակրողիդ զմեզ:

Քարչք:

Սբէ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա-  
չեացուք:

Գոյ. Տէր ողորմեա:  
Եւ եւս հաւատով ընկալեալք յածային,  
սուրբ, յերկնային, յանմահ, յանարատ եւ յան-  
ապական խորհրդոյս, զՏեառնէ զոհացարուք:

Գոյ. Գոհանամք զքէն Տէր, որ կերակրե-  
ցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ: Բաշխե-  
լով զմարմին եւ զարիւնդ ի փրկութիւն աշ-  
խարհի, եւ կեանք անձանց մերոց:

Ասորանոր դպիրքն էղանակեն Տաղս խորհրդա-  
որս՝ մինչեւ Գարչեւ շողովորդքն զմեզ:

(Ապա բանան շողովորդքն:)

Սբէ. Օրհնեա տէր:

Ե- ապա ասանաւ Գարչեւ շողովորդքն սուրբ  
ի յետ ի-ր, ե- երկրպագեալ հա՛մբարե զեղանն:  
Ե- իջեալ է մէջ եկեղեցոյն ասէ ի յայն.

Աղբիւ:

Քնն. Որ օրհնես զայնսփկողք օրհնեն զքեզ  
Տէր, եւ սուրբ անես զյուսացեալս ի քեզ:  
(Գոյ. Օրհնեալ է Աստուած:) Կեցո զժողով-  
ուրդս քո եւ օրհնեա զժառանգութիւնս քո:  
Ջլուամն եկեղեցւոյ քոյ պահեա. սրբեա զսոսս  
որք ողջունեցին սիրով զվայելութիւն տան  
քոյ: (Գոյ. Ամէն:) Գու զմեզ փառաւորեա  
աստուածային զօրութեամբ քով, եւ մի թողուր  
զյուսացեալքս ի քեզ: Ջխաղաղութիւն քո  
պարգեւեա ամենայն աշխարհի. եկեղեցեաց,  
քահանայից, թագաւորաց քրիստոնէից եւ  
ղինուորեալ մանկանց նոցա, եւ ամենայն ժո-  
ղովրդեանս: (Գոյ. Ամէն:) Ջն ամենայն սուրբ  
բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի  
վերուստ են իջեալ առ ի քէն՝ որ ես Հայր լու-  
սոյ: Եւ քեզ վայելեն փառք, իշխանութիւն  
եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից: Գոյ. Ամէն:

Ե- ասէ երկոյս. Եղեցի անուն Տեառն օրհ-  
նեալ, յայսմհետեւ մինչեւ յաւիտեան:

Ե- Գարչեւ շողովորդքն ե- ասէ  
ի յայն:

Կատարումն օրինաց եւ մարգարեից դու ես  
Քրիստոս Աստուած փրկիչ մեր, որ լցեր զամե-  
նայն հայրական անօրէնութիւնս քո. լցո եւ  
զմեզ Հոգւովդ քով սրբով:

Սբէ. Օրթի:

Քնն. Խաղաղութիւն ՚ի ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քուսմ:

Սբէ. Երկիւղածութեամբ լուարուք:

Քնն. Սբոյ աւետարանիս որ ըստ Յովհաննու:

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սբէ. Պատիւով:

Դպ. Ասէ Աստուած:

Քնն. (Յճ. Ա. 1:) ՚ի Էօրէն լուսոյ.

Ի սկզբանէ էր Բանն. վերջ՝ 17. Յիսուսի Քրիստոսի եղէն:

Իսկ է յինանան. (Յովհ. ԻԱ. 15:)

՚ի Յետ յարութեան Տեառն մերոյ Յնի Քնի.

Իւ իբրեւ ճաշեցին. վերջ՝ 19. Եկ զինի իմ:

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Քարոյ:

Սբէ. Սուրբ խաչիւս աղաչեցուք զՏէր, զվստիւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քնն. Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Աղբի:

Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր ընդ հովանեա սուրբ ՚ի եւ պատուական խաչի քոյ ի խաղաղութեան. փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն: Արժանաւորեա դոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Եւ Կանանայն խաչանէ զժողովուրդն, եւ սսէ.

Օրհնեալք եղերուք ՚ի շնորհաց սուրբ Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենսեան. ամէն:

Եւ ի Բաշեւելն ընչեարս ու ժողովուրդան՝ երգեն Սաղմոս ԼԳ:

Ի Տէր պարծեցի՛ անձն իմ. լուիցեն հեղք եւ ուրախ եղիցի՛ն:

Մեծ արարէք ըզՏէր ինեւ. ի լման:

Փառք Հօր եւ. այժմ եւ միշտ:



ՅԱՐԵԼՈՒԾ՝

Օ Ր Յ Ն Ե Ա Լ Գ Ո Վ Ե Ա Լ Ն

ԸՍՏ ԽՈՐՀՐԴՈՅ ԱՐՈՒՐՆ

Յարմարման:

Յինանց Գնչ Ի Համբարձման. Է- Կենտն Կերտ-  
կէնց յարմարման:

Յարութեան Գրիտոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք յարութեան քոյ Տէր:

Համբարձման:

Համբարձման Գրիտոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք Համբարձման քոյ Տէր:

Հոգեոյ գալստեան:

Գալստեան Հոգեոյ սրբոյ երկիր պագանեմք:

Դպ. Փառք գալստեան քոյ Տէր:

Վարդաշառի:

Այլակերպութեան Գրիտոսի երկիր պագան:

Դպ. Փառք հրաշալի այլակերպութեան  
քոյ Տէր:

Տօնից Աստուածածնի:

Տէրութեան Գրիտոսի Ի տօնի (ընծայման) մօր  
իւրոյ եւ կուսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք տէրութեան քոյ Տէր:

Է- Ինչիւրայն հանդիպի, Յարութեան Գրիտո-  
սի Ի տօնի . . . : Բայց զՓոխմանն ոմանս այսպէս  
ասեն. Գալստեանն Քնի Ի փոխումն մօր իւրոյ եւ  
կուսի երկիր: Դպ. Փառք գալստեան քոյ Տէր:

Խաչի:

Սուրբ Խաչին Գրիտոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք սուրբ Խաչի քոյ Տէր:

Եկեղեցոյ:

Տէրութեան Գրիտոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք տէրութեան քոյ Տէր:

Ծննդեան:

Ծննդեան Գրիտոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք ծննդեան քոյ Տէր:

Տնօրէնութեան:

Տնօրէնութեան եւ անուան Գրիտոսի երկիր:

Դպ. Փառք տնօրէնութեւ եւ անուան քոյ Տէր:

Յայտնութեան:

Յայտնութեան եւ մկրտութեան Քնի երկիր պ:

Դպ. Փառք յայտնութեան քոյ Տէր:

Տեսանքնդարաւի:

Քառանօրեայ գալստեան Գրիտոսի երկիր պ:

Դպ. Փառք գալստեան քոյ Տէր:

Աւետարան:

Մարդեղութեան Գրիտոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք հրաշալի մարդեղութեւ քոյ Տէր:

Ղազարոս Է- Ծաղիկաբարդին:

Գալստեան Գրիտոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք գալստեան քոյ Տէր:

Աստի հինգըստաւան:

Տէրութեան Գրիտոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք տէրութեան քոյ Տէր:

Պահոց աստուած:

Տէրութեան Գրիտոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք տէրութեան քոյ Տէր:

Այլ Է- Ի տօնս Սրբոց՝ յաղթման Կահանային,

յիւ զստոյգն Է- այլուր՝ Չտէրութիւնք քո:

ԵՐԳ ԺԱՇԱԿՍԱՆ ՍՐԲՈՅ ՊԱՅԱՐԱԳԻ

ԸՍՏ ԵՒՈՒՐՅ ՁԱՐԵԹՈՒՆ

Կերպիկի :

Լէմ : լուիսմ. անձն լէմ : մի : անձն լուիս :

Երկուշաբթի :

Լն՝յո ճրջմանիտ եւ ճանազմ յթ Լօ՞ր. ծաղուսն եւ կնիք. Բան եւն ճրնոնդ : Որ կանգնեցեր յեթանոց սեանց զէկեղեցի սո՞ւրբ. անծեալ ի սպանդ զեղըն պարարտի : Ընորհեա՛ն : մմ մեղ. կերակրիլ յիմաստութեան քո՞ւմ սեղանոյ. ողբը՞մեա՛ն :

Երեքշաբթի :

Լանց կենաց եւ անմահութեան ճանաչ կ. սուրբ եւ անձառ սոսկալ խորհորդ : Որ ի յերկնից Բլեր կենդանութիւն մարդկան. կենդանի եւ կենդանարար : Պանձորքեւեա՞ք քաղցեցըց ըզքաղցրութեան քո՞ւմ ճանաչկուն. ողբը՞մեա՛ն :

Չորեքշաբթի :

Գո՞ւաբն երկնից եւ ճանապարհ անբայութե. տեր երկնի, ի յերկնայնոցն օրհնեալ դասուց : Որ զմարմին քո եւ զարիւնդ անպական բաշխեցեր առաքելոցն : Մաքրեա զմեղ

հաղորդիլ սրբութեան քո՞ւմ խորհրդոյ. ողբը՞մեա :

Հինգշաբթի :

Բան Լօր եւ քահանայապետ սուրբ. յանմարմնոցն գովեալ ի բարձունս : Որ ի վերայ խաչին պատարագեալ մարմնով, հեղեր զարիւնդ ի փրկութիւն : Սրբեա զմեղս մեր կենարար եւ փրկական քաւիչ քո արեամբդ. ողբը՞մեա :

Ուրբթի :

Ղէմ հոգեւոր եւ զլուս անկեան օծեալ. բարեբանեալ ի հրեշտակաց : Ար ի խաչին բացեր զկողահոս աղբուրդ, զանմահութիւն ցօղեալ տիեզերաց : Աբբո եւ մեզ ծարուեացս զբաժակ քո փրկութեան. ողբը՞մեա :

Շաբթի :

Գառն Աստուծոյ զենեալ միշտ եւ կենդանի. անմեղ եկեալ ի պատարագ : Ար ի հաշտութիւն Լօր պատարագեալ բառնաս զմեղս աշխարհի. յանմահից զօրաց փառաւորեալ : Յիշեա զհոգիս հաւատով ի քեզ ննջեցելոցն մերոց. ողբը՞մեա :

Շաբաթի ԳԶ. Ժաղոսաշոյ :

Ղ Երանգօղն երկնից մըշտընջենանոր Լօր Ո՞րդին. ներգործեալ իմո՞վս ի վեր քան ըզհրաշա. ծառայի առեալ ըզկերպ. անկողնպտելի աստուածութեամբն :

Բաշխե զմարմին իւր եւ զարիւն շնոր ուխտ անուանեալ եւ յիշատակ կամանոր մահունն. մերձեցելոցս ի նա՞ծ սրբութեամբ :

Ո՛ր մարմնով եւ արեամբ քո ցուցեր ըզթո-  
ղութիւն մե՛ղաց. որ շմբէ՛ շտ պատարագի՛ս  
ի մեզ անծախապէ՛ծս. մաքրեա՛ ի մէնջ ըզմէզ  
խաւարին խորհրդոյն եւ լուսաւորեա՛ զմեզ :

Ո՛ր քաւիչ զայս նոր ուխտ ցուցեր յետ  
առաջնոյ քոյ. մահացելո՞ցս ի ճաշկմանէ  
նախահո՛ծրն. մաքրեա՛ ի մէնջ ըզմէզ խաւարին  
խորհրդոյն եւ լուսաւորեա՛ զմեզ :

Ո՛ր կազմեցեր սեղան խորհրդոյն. եւ արբու-  
ցեր յանմահական բաժակէն. սըբբոց քոց  
առաքելոցն այսօր ի սուրբ վերնատունն. աղա-  
չեմք փրկիչ սո՞ղո՞րմեա՛ :

Մաքրեա՛ ըզմիտս եւ ըզխորհուրդս. զի եւ  
մէք հաղորդեսցո՛ւք սըբբութեամբ. ընդ սըբբոց  
քոց առաքելոցն այսօր ի սուրբ վերնատունն.  
աղաչեմք փրկիչ սո՞ղո՞րմեա՛ :

Տաղ Բաշխման :

Մայր հաւանոյ սուրբ հարսնարան.

Եւ առաջատ գերադրական.

Տո՛ւն փեսայիդ անմահական

Որ զարդարեաց զքեզ անվախճան :

Երկրորդ երկին դու հրաշտկան :

Փառաց ի փառքս բարձրական.

Որ զմեզ ծնանիս լուսոյ նրման

Աւազանուն որդիական :

Բաշխես ըզհացըդ մաքրական,

Չարիւնդ ըմպել տաս սոսկական .

Հանես ի վեր գերաստիճան  
Իմանալեացըն զուգական :

Ե՛կայք սրգիք նոր Սխնի .

Մատիք առ Տէ՛ր մեր սըբբութեամբ .  
Ճաշակեցէք եւ տեսէք .

Ձեք քաղցր է Տէ՛ր մեր զորութեամբ :

Նա բաժանեաց ըզՅորդանան .

Դու զծով մեղաց աշխարհական .

Նրմա Յետու մեծ զորական .

Քեզ Տէ՛ր Յիսուս Հօր էական :

Հինն օրինակ քեզ եւ նման .

Դու խորանին գերագրական .

Նա խորտակեաց զգրունս անգամանդ .

Դու զըժոխոյ զգրունս ի հիմանց :

Հայս այս մարմին է Քրիստոսի .

Բաժակս արիւն նորոյ ուխտի .

Ծածկեալ խորհուրդըն մեծ յայտնի .

Աստուած ի ամա մեզ տեսանի :

Սա է Քրիստոս Բանն Աստուած ,

Որ ընդ աջմէ Հօրն բազմի .

Եւ աստ ի մեզ պատարագի .

Բառնայ ըզմեղքս աշխարհի :

Այն որ օրհնեալ է յաւիտեան

Հարբ եւ Հօգւովըն միաբան .

Այժմ եւ յաւէտ եւ յապագայն

Եւ անբսպառ միշտ յաւիտեան :

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆԻՆ.

Եկե՛ եպիսկոպոս լինե՛ խորհրդածոն, առնու՛ եւ շորբէ՛ հոնեան՝ եւ անէ՛ ի վերայ լանջացն, եւ զպարտական երկորունն: Եւ դպիրքն եղանակեն ի գեեսարաորելն՝ Շր. Խորհուրդ խորին. Երես 1:  
(Եւ յերեսն աւեն Շարական եկեղեցոյ. ԳՁ:

Այսօր անձնութիւն զուարճանայ նոր հաստատելով զերկիր. պարզք սուրբք փառաբանեն զըւարթնոց. եւ մեք ձայնիւ օրհնութեամբ զանդարեացո՛ւք սուրբ ըզտօնս: Այսօր եւ մեք ցընծամք տօնիւս ընդհանուր հնչմամբ. մեծապէս փայլմամբ երեւեցաւ յաշխարհի. առ Աստուած գոհութիւք ընթանան. պատմեն անդադար զբան կենդանի: Խընդա՛ եւ զուարճացիր եկեղեցի. կոյս ար եւ հարսն երկնաւոր փեսային. ահա տեսանեմք զօծեալն ըզբերստոն. գո՛լով առ քեզ լայն հեթանոսաց:

Կամ այլ շարական եկեղեցոյ:

Եւ գան ի դռնն եկեղեցոյն. եւ սխանին Շարական ԳՁ:

Հրաշափառ Աստուած եւ միշտ բարեխնամօղ. որ յանձնգիտութեամբ ըզփրկուութիւն Հայաստանեայց ըսկզբնաւորեալ. ի պարթեւական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շորհեցեր. վասն որոյ բարեխնութեամբ սորա փրկիչ կեցո ըզմեզ. այժմ եւ ի քո՛ յահաւոր գալուտեանն:)

Կց: Թագաւոր երկնաւոր. զեկեղեցիք քո անշարժ պահեա. եւ զերկրպագոս անուանըք քուն՝ պահեա՛ ի խաղաղութեան:

Եւ աւեն Սաղոս. ԻԵ: Կց. Լուացայց. Եւ լուանայ զիւս: Եւ այն աւենայն ըստ կարգի, Երես 2:

Ջիւն Աղաղակեցէք սաղոսն արող Սրի. Սբ եկեղեցեաւս աղաչեսցուք:

Աղջիտ:

Եպիս. Առ դրան սուրբ տաճարիս եւ առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ տեղոյս խոնարհեալ՝ երկիւղիւ երկիր պագանեմք. զսուրբ, զհրաշիլ եւ զյաղթող (զյարութիւնդ) քո փառաւորեմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ սուրբ Հօգեոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամեն:

Եւ մոանեն յեկեղեցի սաղոսելով. Կց. Մտից առաջի սեղանոյ: Փի. Դատ արա ինձ Աստուած. Երես 5:

Եւ յեթ աւելոյ զի յարկի սրբութ. մարտոցեալ անկանի եպիսկոպոսն առաջի սրբոյ սեղանոյն ի վերայ երեսաց իւրոց լուս եւ անմառնչ. եւ ասացե զԱղջիտ առ Հոգին սուրբ արձօնինչ քործոյն:

Ամենակալ բարերար մարդասէր Աստուած բոլ:

Դարչեալ իրիկեսոյն ի նոյն կարգ բանի:

Աղաչեմք եւ աղերսեմք արտասուալից հառաչ:

Եւ դպիրքն եղանակեն մեղերի խորհրդաւոր կամ

ԵՐԺ :

Ընտրեալք յԱստուծոյ՝ ով երջանիկ ք  
(հայրապետ.)

Նրմանեալ Ահարոնի՝ եւ Մովսէսի մարգարէիս.  
Այնմ որ զգեստուցն էր յօրինօղ. զոր Ահարոն  
միշտ ըզգեցնոյր:

Յօրինէր ըզպատմուծանն՝ զոր ի չորից կազմեալ  
նիւթոց .

Ի կարմրոյ, ի կապուտոյ, ի բեհեզոյ, ի ծիրանոյ:  
Թեւ ըզլծեւ յօրինէր. կարգն առաջին էր  
կարկեհան.

Եւ զօճու մըն գրապանին շուրջանակի բոլորաշէն:  
Եւ յընթացս գարշապարին հընչէր երկիր,  
յընծայր խորան:

Արդ ի նոյն նմանութե՝ քն ըզմեր տերս յօրինէ:  
Յորժամ մըտցես ի քն խորանն, անդ յիշեսցես  
զմեր նընջեցեալսն:

Յորժամ առնես ըզպատարագն, յիշես եւ զես  
ըզբազմամեղս:

Ձի եւ մեզ ողորմեսցի ի մուսանգամ իւր գալըս-  
տեանն:

Հօրքն փառք Որդոնն պատիւ. եւ քն Հոգւոնն  
այժմ յաւիտեան.

Յաւիտեանս յաւիտենից. Գրիստոս օրհնեալ ի  
համայնից:

ՁԸնտրեալն որ ասեա՝ թե զիս թի՛ ասեր:

ՍԵՂ. Օրհնեա տեր:

Եպիսկ. Ձի քս է զթուփիւն եւ կարողու-  
թիւն եւ մարգասիրութիւն, զօրութիւն եւ  
փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ասպ յիսն զվարագոյրն:

Դպ. Շր. Գվ. Յայս յարկ նուիր. էրեւ Յ:

Եւ քանն զվարագոյրն:

ՍԵՂ. Օրհնեա տեր:

Եպիսկ. Օրհնեալ թագաւորու. եւ այն ըսոր  
հարբի: Եւ ասրիւսաքն հրաման առեալ հարբայ  
չաւեարանն, եւ ասէ զչաւարանսն յայնիւ:

Վերաբերութիւն Ընծայիցն:

Եթէ հանդիսաւոր օր լինի եւ զընծայան վերա-  
բերել հասիցիս, այս է արարողընթիւնն:

Յորժամ պարարագիւն ասէ. Տէր Աստուած  
օրհնեսցէ զամենեսեան. ասրիւսաքն. Սաղմոս  
ասացէք Տեառն: Եւ դպիրն էրբէն զՍրբասա-  
ցոնթիւնն ըսոր խորհրդոյ առորն հարբեալ: Ապա՝

ՍԵՂ. Մի ոք յերախայից:

Դպ. Մարմին տերունական:

Եւ քան ինկարիելով է սորբ խորհրդանոցն:

ՍԵՂ. Յարեւուն եհար զխորան իւր. եւ ինքն  
որպէս փետոյ զի ելանէ յառագաստէ իւրմէ:

Դպ. Եւ ցնծայ նա որպէս հսկայ. յընթա-  
նալ ըզճանապարհս իւր:

ՍԵՂ. Ո՛րք բ՛ոս քրո՞ն վա՛ն ի՞նչ ցնծո՞ցն:

Դպ. Խորհրդաւ: քան զկերպարանսն ի՞նչ:

Եւ քան յարեւելից իողմն:

ՍԵՂ. Ճանապարհ արարէք այնմիկ. որ նստի  
յերկնից երկինս ընդ արեւելս:

Դպ. Եւ կենդանաւ նաւրանսն ըրորդու-  
թեանն. զերեքսրբեանսն օրհնութիւնս. մա-  
սու զցանեմբ:



Ի հանդիսի առաջ ոմնի յաւելան՝  
 Շնորհիւ աւուրս մեզ ողորմեա։  
 Ապա քրչ. Սաղմոս ասացէք Տեառն Աս-  
 տուծոյ մերոյ, դպիրք։

ՊԵՏՅՕՆ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ՆՆ ԶԵՅԵԼՈՑ

Յաւորս պարտադէն, զինի Պահպանեա ողբիցն՝  
 քհն. Օրհնեալ Տէր ՚ի մեր Յն քն. ամէն։  
 Սբի. եւ եւս խաղաղութեան զՏէր աղա-  
 չեացուք. ընկալ, կեցոյ եւ ողորմեա։  
 քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որ-  
 դոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ։  
 Ե- խոնի ածեն։

Ե- սխանին Շարախան հանգստեան, ըստ յայնին։  
 Ա. 2.

Որ անձառ տնօրէնութեամբ ի փրկութիւն  
 անգի մարդկան խոնարհեցար Բանդ Աստուած.  
 \* այսօր հանդուսմ եւ ըզմեր ըզնրնջեցեալսն  
 ընդ սուրբքս քն. որ միայնդ ես մարդասէր։ Որ  
 անչարչարելից մարմնով էկիր կամաւ ի շար-  
 չարանս. եւ ի խաչին բեւեռեցար. հեղեղ  
 զարինդ ի փրկութիւն. այսօր հանդու։ Որ  
 թաղմամբն երեքօ ըեսայ ըզբռնութիւն մահու  
 լուծեր. եւ կոխեցեր զիշխանն մահու. եւ վեր-  
 ածեր ըզնրնջեցեալսն, այսօր հանդուսմ։

Մծ. Որ զաւետիս Հոգւոյն ի հրեղէն ի  
 հրեշտակէն ընկալար ուրախներ. բերկրեալք Տէր  
 ընդ քեզ Մարիամ ամենօրհնեալ։ Անբսկիզբն  
 Բանըն հաճեցաւ առնուլ մարդեղութեամբն  
 ըսկիզբն ի կուսեղ. քրիստոս Աստուած թա-  
 զաւորն յաւիտենից։ Աղաչմբ ըզքեզ սուրբ  
 Աստուածածին առ քրիստոս բարեխօսեալ  
 փրկել ըզժողովուրդս իւր զոր զընեացարեամբն  
 իւրով։

Խ. 2. Հրաշակերտ եւ զօրեղ փայտխաչն՝ քոյ  
 քրիստոս. դաւաղան զօրութեան ի յերկրի  
 երեւեալ. \* եկայք ժողովուրդք երկրբազեա-  
 ցուք։ Չոր Հրեիցրն ծածկեալ զանթաքչելն  
 ըզգանձրն. փափագմամբ թագուհւոյն փայտ  
 կենաց յայտնեցաւ. եկայք ժող։ Փառք Հօր  
 եւ։ Սա է զէն յողթութեան հաւատացելոյ.  
 անոյեան եւ կնիք յողթող ընդդէմ թըշա-  
 մւոյն. եկայք ժող։

Այժմ եւ միշտ։ Որ հրաւիրեցեր յանմա-  
 հութիւն զազգրս մարդկան. անմահութեանց  
 բաշխօղ քրիստոս. աղաչանօք Աստուածա-  
 ծնին. այսօր հանդուսմ եւ։

Ա. 4.

Չեռք քո արարին եւ բստեղծին զե՛ս ի  
 հողո՞ւյն ի յօրհնեւ ըզքեզ Աստուած յաւ-  
 իտեան։ Ի՛սկ պատրանօք բանսարկուին խափա-  
 նեցայ յանձառ լուսո՞ւյն. եւ դարձայ անդրէն  
 ի հող յորմէ ստեղծայ։

Մծ. Ո՛վ գերահարաչ ծաղիկ բուրեալ յե-  
 դեմայ. հոտ անմահութեան ծնընդոցս եւայի.  
 յորմէ սիրեցաւ մահ ընդ տիեզերս. \* օրհնու-  
 թեամբ ըզքեզ մեծացուցանեմք: Գու լուծիչ  
 երկանց բարձօղ անիծից. ծանու մն արեւու  
 լուսոյն ճըշմարտի. որով հերքեաւ խաւարն  
 անաջին. օրհնութեամբ: Ըզքեզ ունիմք  
 բարեխօս կոյս ամէնօրհնեալ. մայր անարատ  
 էմմանուէլի. տաճար Բանին Հօրն երկնաւորի.  
 օրհնութեամբ:

ԽԷ. Սեղան քո Տէր զօրութեանց հաւա-  
Ա ղ թ ի + :

Տ Ե Ր Ա ս տ ու ա մ մ Ե Ր , Ա ս տ ու ա մ Բ ա Ր Ե Ր ա Ր , ո Ր զ վ Ր ի կ Ե ա լ Ե Լ զ Տ Ե ու ա ց Ե ա լ Ի ք Ե ն , Ե ա յ ն :

Ս ա ղ մ ս Ծ :

Ո ղ ը Ր մ Ե ա ի ն ձ Ա ս տ ու ա մ՝ ը ս տ մ Ե ի ո ղ ը Ր մ ու թ Ե ա ն ք ու մ . ը ս տ Բ ա զ ու մ զ թ ու թ Ե ա ն ք ու մ ք ա լ Ե ա զ ա ն օ Ր Ե ն ու թ Ի ը ն ս ի մ :

Ա ա լ Ե Լ ը ա յ զ ի ն յ ա ն օ Ր Ե ն ու թ Ե ն Ե ի մ Ո ՛ . Ե Լ ի մ Ե զ ա ց ի մ ոց ս ու Ր Բ ա Ր ա զ ի ս :

Չ ա ն օ Ր Ե ն ու թ Ի ը ն ս ի մ Ե ս ի ն ձ Ե ն զ ի տ Ե մ . Ե Լ մ Ե զ ք ի մ ա ո ա ջ ի ի մ Ե ն յ ա մ Ե ն ա յ ն ժ ա մ :

\* Ե թ Է ս ար կ ա լ ա զ ոչ գ ու ց Ե՝ դ պ ի Ր ն ա ս ա ս ց Ե զ ք ա Ր ո ղ զ ն . ն յ ն ա կ Ե ս Ե Լ զ պ ա տ ա ս ի ա ն ի ն փ թ ի ա ն ա կ կ ը ն ք ա Տ օ Ր ն :

Քեզ միայն մեղայ Տէր. եւ չար առաջի քո արարի:

Որպէս արդար եղիցես ի բանս քո. եւ յաղթօղ ի դատել քեզ:

Անօրէնութեամբ յղացաւ. եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր. զանշայտս եւ զճածկեալս իմաստութեամբ քով յայանեցեր ինձ:

Յօղեա յիս մշտաւ, եւ սուրբ եղէց. լուս, եւ քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի արա ինձ Տէր զցնծութիւն եւ զուրախութիւն. եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Գարձո զերեսս քո ի մեղաց իմոց. եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն:

Սիրա սուրբ հաստեա յիս Աստուած. եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում:

Մի բնկենուր զիս Տէր յերեսաց քոց. եւ զչոզի քո սուրբ մի՛ հաներ յինէն:

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան. եւ հոգևով պետութեան քոյ հաստատեա զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. եւ ամպարիշտք առ քեզ դարձցին:

Փրկեա զիս յարե՛նէ Աստուած. Աստուած փրկութեան իմոյ. եւ ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում:

Տէր եթէ զչքթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Թե՛ կամեցեալ էիր պատարագս՝ մատուցանեաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ՝ Ա՛ճ ոչ արհամարհէ:

Բարի արա Տէր կամօք քովք Սիրովնի. եւ շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս:

Քարոյ:

Սրի՛. եւ եւս խաղաղութե՛ զՏԻ՛ աղաչեսցուք:

Վասն տղայիս աղաչեսցուք զմարդասէրն Աստուած՝ զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում, եւ արժանաւորեսցէ զսա լուացման վերջստին ծննդեան, եւ զգետուռ անապականութեան. եւ զուզաթուռեսցէ զսա ընդ հաւատացեալս անուան իւրոյ սրբոյ. եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղջկա:

Ընկալ, մարդասէր Տէր, զընծայեալս քեզ:

Քարոյ:

Սրի՛. եւ եւս խաղաղութե՛ զՏԻ՛ աղաչեսցուք՝

Վասն քաւութեան մեղաց եւ թողութեան յանցանաց, եւ իջանելոյ ի վերայ երեխայիս ողորմութեան եւ զթութեան Տեառն Աստուծոյ ամենակալին: Աեցուսցէ եւ ողորմեսցի:

Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղջկա:

Տէր Աստուած, մեծ եւ փառաւորեալ յամենայն արարածոց. եւայլն:

Ապա հրամայէ Թահանայն Կնտահօրն դարանալ զԷդ  
յարեմոսոս, Եւ հարցանէ զնա յանուանէ որչափոյն  
ասելով:

Քհն. Այո անուան, հրատարիս ի սատանայէ:

Կնտ. Հրատարիմ:

Քհն. Եւ յամենայն խաբէութենէ նորա:

Կնտ. Հրատարիմ:

Քհն. Յամենայն չար գործոց, ի խորհրդոց,  
ի գնացից եւ ի չար կամաց նր: Կնտ. Հրատարիմ:

Քհն. Յամենայն չար հրեշտակաց, պաշտօ-  
նէից, կամարարաց, եւ յամ չար զօրութենէ նր  
հրատարելով հրատարիս: Կնտ. Հրատարիմ:

Յետոյ Թահանայն հրամայէ Կնտահօրն դարանալ  
յարեմոսոս. Եւ հարցանէ յարոհ յանուանէ զընծայ-  
եան, պարտախանի որալով Կնտահօրն:

Քհն. Այո անուան, հաւատամ ի յԱստուած  
Հայր ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի:

Կնտ. Հաւատամ:

Քհն. Հաւատամ ի Յիսուս Քրիստոս յՈրդին  
նորա միածին Տէրն մեր, ի ծնեալն եւ չարչա-  
րեալն:

Կնտ. Հաւատամ:

Քհն. Հաւատամ ի Հոգի սուրբ. ի սուրբ եկե-  
ղեցի կաթողիկէ. ի հաղորդութիւն սրբոց. ի թո-  
ղութիւն մեղաց. ի յարութիւն մեռելոց, եւ ի  
կեանսն յաւիտենականս: Կնտ. Հաւատամ:

Եւ իսկոյն Թահանայն ի մտախն ընդ Կնտահօրն պարզ  
յայնիս ասէ զՀաւատամքն ի քոռն. որես երես 12:

Յետ այնորիկի գալեն զքոռն եկեղեցոյն: Եւ ասի

Սաղմոս ճԺԻ:

Խոստովան եղերուք Տեառն զի բարի է. զի  
յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասացէ տունն Իսրայէլի՝ զի բարի է. զի  
յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասացէ տունն Ահարովի՝ զի յաւիտեան է  
ողորմութիւն նորա:

Ասացեն երկիւղածք Տեառն, զի յաւիտեան  
է ողորմութիւն նորա:

Ի նեղութեան կարգացի առ Տէր. եւ լուա-  
ինձ յանդորր:

Տէր է իմ օգնական, եւ ես ոչ երկեայց. զի  
արացէ ինձ մարդ:

Տէր է իմ օգնական. եւ ես տեսից ի թշնա-  
միս իմ:

Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ ի մար-  
դիկ. բարի է յուսալ ի Տէր քան յուսալ յիշխանս:

Ամենայն ազնիւք շրջեցան զինեւ. եւ անուամբ  
Տեառն յաղթեցի նոցա:

Շրջելով շրջեցան զինեւ, պաշարեցին զիս ի  
միասին. եւ անուամբ Տեառն վանեցի զնոսա:

Շրջեցան զինեւ որպէս մեղուք, վառեցան  
բորբոքեցան որպէս փուշք ի հուր. եւ անուամբ  
Տեառն մերժեցի զնոսա:

Ի մերժելն դրդուեցայ, եւ եղէ մերձ ի գլու-  
րել. եւ Տէր ընկալաւ զիս:

Զօրութիւն իմ եւ օգնութիւն իմ Տէր. եւ  
եղեւ ինձ ի փրկութիւնս:

Չայն ցնծութեան փրկութեան ի յարկս  
արդարոց:

Ալ Տեառն արար զօրութիւն, ալ Տեառն  
բարձր արար զիս. եւ ալ Տն արար զօրութիւն:

Ոչ մեռայց այլ կեցից. եւ պատմեցից զգործս  
Տեառն:

Խրատելով խրատեաց զիս Տէր. եւ ի մահ  
ոչ մատնեաց:

Եւ Բահանայն որնէ զԺայր ուրարեն ի վերայ Կրայնին, Եւ Բանայ զԴոուան եկեղեցոյն ասելով՝

Բացէք ինձ զգրունս արդարութեան, զի մըտից ընդ այն եւ խոստովան եղէց Տեառն:

Այս գրուն Տեառն է. եւ արդարք մտանեն ընդ սա:

Եւ մտանեն յեկեղեցին ասելով՝ Սաղմս ՂԹ:

Մղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. եր. 4:

Փառք Հօր: Այժմ եւ միշտ:

Եւ ասէ Բահանայն ցին Բահայրն. Մուտ ի տաճարն Աստուծոյ, Եւ այն:

Եւ յորժամ երևայ յաստիանն՝ արխանէ Բահանայն մտոր ջոր յաստիանն՝ ասելով.

Քհն. — Կց. Չայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Աստուած փառաց որոտաց. եւ Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց:

Դպ. — Փի. Մատուցէք Տեառն որդիք Աստուծոյ. մատուցէք Տեառն զորդիս խոյոց:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացոց թղթոյն է ընթերցուածս: Գ. 24:

Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ի Քս Յս, զի ի հաւատոցն արդարացոյք. այլ իբրեւ եկին հաւատքն՝ ոչ եւս ընդ դաստիարակաւ եմք. քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք ի Քս Յս: Որք միանգամ ի Քս մկրտեցաւ ըսք՝ զՔս զգեցեալ էք. չիք խտիր՝ ոչ հրէի եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ ազատի, ոչ արուի եւ ոչ իգի, զի ամենեքեան դուք մի էք ի Քս Յս: Ապա եթէ դուք Քսի էք՝ ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ աւետեացն ժառանգք: 29:

Ա՛լէ՛լուիա. ալէ՛լուիա.

Տէր հովուեացէ զես. եւ ինձ ինչ ոչ պակասեացէ:

Մբի. Ալէ՛լուիա. Օրթի:

Քհն. Խաղաղութիւն ի ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հագւոյդ քում:

Մբի. Երկիւղածութեամբ լուարուք:

Քհն. Սբյ Աւետարանիս որ ըստ Յովհ: Գ. 1:

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Մբի. Պատիւսմէ:

Դպ. Ասէ Աստուած:

† Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Ալ էր այր մի ի Փարիսեցոց անտի. վերջ՝ ամենայն ծնեալն ի Հօգւոյն. 8:

Քարոյ:

Մբի. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Քհն. Տէր ողորմեա:

Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան ձանց մերոց զՏէր աղաչ: Տէր ողորմեա:

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, եւ հաստատութեան սրբոյ եկեղեցոյ, զՏէր աղաչեսցուք:

Տէր ողորմեա:

Վասն զի Տէր ուղղեացէ զգործս ձեռաց մերոց, եւ զքահանայիս որ հանդերձեալ է մկրտել զսա, զՏէր աղաչեսցուք:

Տէր ողորմեա:

Վս գործակից լինելոյ Հօգւոյն սբյ ի սրբբել զառաջիկայ ջուրս, զՏն աղ: Տէր ողորմեա:

Վասն ընդունելոյ սմա զօրհնութիւնսն Յորդանանու, եւ լինելոյ ի բժշկութիւն հօգւոց եւ մարմնոց, զՏէր աղաչեսցուք:

Տէր ողորմեա:

Վասն վերածնելոյս որ ի սմա մկրտի, լինել

ամս որդի լուսոյ եւ ճշմարտութեան, զՏէր աղա-  
չեացուք:

Տէր ողորմեա:

Յիշելով զԱճած ինն եւ զմիշտ կոյան Մարիամ,  
եւ զԵր Յովհաննէս Մկրտիչն, եւ զԿամ Եբս, եւ  
նորօք զՏէր աղաչեսցուք:

Յիշեա ՏՐ եւ:

Եւ եւս եւ վն միաբանութե ճշմարիտ եւ Եբ  
հաւատոյս մերոյ, զՏէր աղաչ:

Տէր ողորմեա:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տ՛ն Աստուծոյ  
ամենակալին յանձն արասցուք:

Քեզ Տեառնդ:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի:

Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղջիտ:

Տէր մեր Յս Բս, որ զօրութեամբ քով մեծաւ:  
Խաղաղութիւն ք ամենեցուն:

Տէր Աստուած ահաւոր, Աստուած յաւիտենակ:

Ապա ասե՛ տահանայն:

Օրհնեսցի՛ ք եւ սրբեսցի Ղ՛րս ա՛յս ն՛րջանաւ:

Դպ. Ա՛մէ՛ն. ա՛լէ՛լ՛ն՛իա՛. ա՛լէ՛լ՛ն՛իա՛. ա՛լէ՛լ՛ն՛իա՛:

Երեցո՛ւ իրի՛նէ՛՛ Օրհնեսցի:

Ապա Շարախան ԴԶ:

Ա՛ռաբերոյ ա՛ղաւանջ. ի՛ջանելով մեծաձայն  
հնչմամբ ի բարձաճնց. ի նմանութի լուսոյ՛ փայլ-  
ման. հրաճինեաց անկիզբն զաշակե՛՛ ըստն.  
մի՛նչդեռ նըստէի՛ն ի սուրբ վերնատանն: Ա՛ն-  
նիւթական աղաւնի՛. անքննելի ո՛ր քննէ ըզ-  
խորս Աստուծո՛ճ. զոր առեալ ի Հօրէ՛ պատմէ  
զահաւոր եւ զմիւսանգամ գալը՛՛ լստն. զոր

քարն՛ զեցի՛ն համադոյական: Օրհնութիւն ի՛  
բարձունս. ելողին ի Հօրէ եւ յՈրդւոյ Հոգւոյն  
սրբո՛ճ. որով առաքեալքն արբեցան անմահա-  
կան բաժակա՛՛ն. եւ հրաւիրեցի՛ն զերկիրս ի  
յերկի՛նս:

Յայսմ լայրի՛ տահանայն հեղուս ի սուրբ մերոնէն  
խալայնե- ի նոյն ջուրն ասելով. Հեղուամն մեռոնիս:  
Եւ ասէ զաղջիս. Որ կոչեցեր զճառայս քո Տէր:

Ապա հարցանէ ցերախայն՝ որով զանոն նորս.

Քհն. Այս անոն, զի՛նչ խնդրես:

Կնտ. Խնդրեմ՝ մկրտիլ:

Քհն. Արդարեւ խնդրես:

Կնտ. Հաւատով խնդրեմ՝ մկրտիլ, եւ մաքրիլ  
ի մեղաց, եւ ազատիլ ի դիւաց եւ ճառայել Այ:  
Քհն. Ըստ հաւատոց քոց եղիցի քեզ:

Յայնժամ՝ տահանայն արեալ զարայն ի յեւանէ  
ինտահօրն՝ մերտէ ասելով.

Այս անոն ճառայս Յիսուսի, եկեալ. Եւայն:

Ապա ասէ:

Գնեալ արեամբն Քրիստոսի ի ճառայութե՛  
մեղաց. Եւայն: Եւ զայս ասելով երեցո՛ւ ընկղեցո-  
ցանէ զնորընձայն ի ջուրն. Եւ ապա ասէ. Որ ի՛ քս  
մկրտեցար՝ զքս զգեցեալ ես. Եւայն:

Արի՛. Օրթի:

Ա-Երարան ըստ Մատթեոսի: Գ. 13:

Ճ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յայնժամ զայ ի Գալիլէէ ի Յորդանան.  
Քեր՛ ընդ որ հաճեցայ. 17:

Եւ ապա Բանանայն ընդ Կնթափորն աւել ՂՀայր մերն է Բռնն:

Աղջիւն:

Որ լուսաւորեցեր զարարածս քո Քրիստոս Աճ: Խաղաղութիւն քի՛ ամենեցուն:

Աստուած որ մեծդ ես եւ մշտնջենաւոր. եւ աւարդի՛ աւելլով՝ իշխանութիւն եւ պատիւ՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտ:

### ԿԱՆՈՆ ԴՐՈՇՍ ՏԱԼՈՑ

Յեք այսորիկ Բանանայն քնի զալ յեւն է վերայ որդայոյն, եւ աւել:

Ամենակալն Աստուած, եւայլն:

Եւ յառաջ Բան զԵրոննելն աւել:

Շարահան ԴՁ:

Ո՛ր յառաջադոյն յօրէնս. յօրինակ միածնիք քոյ Հայր երկնաւսձր. ետո՛ւր զօրութիւն ի յիւզ սրբութեան յօժո՛ւմն օծելով՝ Գ. \* Հէ՛ղ եւ յիւզ զնս յայս զերկնային քո զնորհս: Ո՛ր խոնարհեցար ի մեզ. իւզ թափեալ անուն օծեալդ Աստուծո՛յ. խոնարհելով զԱստուածութիւնդ օծեալ ըզմարդկային առե՛ր բընութի՛ւնս. Հէ՛ղ եւ յիւզ: Ո՛ր ի վերնատունըն սուրբ. իջանելով յառաքեալն օժո՛ւմն օծելով. եւ օժմամբս այսո՛ւ վերաստեղծե՛ր նորօք զՀոգեղէնս որդիս Աստուծո՛ւ. Հէ՛ղ եւ: Ո՛ր զարդարեա սովնւ. ի՛ հանդերձս լուսափայլս եւ գերապայծա՛մոս:

զհարսնացեալ եկեղեցի քո սո՛ւրբ. մանկուներք սորա ընդ հրեշտակս օրհնե՛ն սուրբ զԵրո՛րդութիւնդ:

Ապա Բանանայն Ռախաւէ զալ Բոյնն է սուրբ Բռնն, եւ զնայն յեւն երեալ է Գլուխ նորեկոյն՝ օժանէ նախ զԲախարն աւելով:

Ա՛յս անուն, իւզ անոյշ Հեղեալ յանուն Յիսուսի Քրիստոսի ի վերայ քո, Կնիք աստուածային եւ երկնաւոր պարգեւացն, յանուն Հօր քի՛ եւ Որդ:

Օժանէ եւ զայլ մասունս մարմնոյն՝ աւելով. Կնիքս որ յանուն Յիսուսի, եւայլն:

Յեք այսորիկ աւել խաւակիւնելով:

Քնն. Խաղաղութի՛ քի՛ ընդ քեզ փրկեալդ Ա՛յ:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Քնն. Խաղաղութի՛ քի՛ ընդ քեզ օծեալդ Ա՛յ:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Քնն. Խաղաղութի՛ քի՛ ընդ քեզ բերկրեալդ Ա՛յ:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Քանանայն Բաթախաւ Կամ այլ նման իբօ՛ւ Քնն զԲոյն իւր եւ զօծեալ որդին որդային: Եւ քնի է Գլուխ նորս զպիտակ Կնիւզն՝ աւելով. Ա՛յս անուն, ա՛ռ զպայծառ հանդերձս. եւ արկանէ զպիտակ զԲախարն ի վերայ նորս: Եւ ապա աւել:

Աղջիւն:

Օրհնեալ ես, բարեխնամող Աստուած, որ զգեցուցեր:

Եւ որայ Կնթափորն զլաւեալ մօտեղէնն՝ աւելով. Առ զվառեալ լապտերս, եւայլն:

Ե- ապա հրամայե Կահանայն Կնասհօրն Զնրա-  
դրել. Ե- Կնին ասէ՝

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Աղջիւտ:

Տէր Աստուած ամենակալ, Հայր Տեառն  
մերոյ Յիսուսի Քրիստոսի. քեզ խոնարհեց:

Ե- ասեալ է յե-սայ Կնասհօրն շնորբնծայն է  
վերայ Բաղկաց Ե-րոց՝ հանէ է բեծն. Ե- երկրպագե  
երեցս՝ ասելով.

Այս անուն ծառայոս քսի եկեալ յերախայու-  
թէ է մկրտութի, է մկրտութէ յերկրպագութի:

Ե- հանեալ է Բաղկաց Ե-րոց շնորբնծայն՝ աս  
է քերէս Կնասհօրն, Ե- ասէ.

Աղջիւտ:

Որք մկրտեցան եւ լուսաւորեցան, եւ ետուր:

Քարոյ:

Սբի. Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի  
սովաւ փրկեսցէ զմեզ է մեղաց. եւ կեցուսցէ  
շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր  
Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղջիւտ:

Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Դպ. յայնի- . Հայր մեր որ յերկինս:

Քհն. Այս անուն, երթ է խաղաղութիւն, եւ  
Տէր եղեցի ընդ քեզ:



# Կ Ա Ն Ո Ն Հ Ա Ր Ս Ա Ն Ե Ա Ց .

## ՆՅԱՆ ՕՐՀՆԵԼՈՑ .

Պնէն է վերայ սիրել շնշանն. Ե- այս կարգ կ-  
ասի:

Սբի\*. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչես-  
ցուք. ընկալ: Քհն. Օրհնութիւն եւ փառք Հոր  
եւ Որդ: Ե- յասելն խոնի արկանէ:

Հարսիան ԱՎ:

Խորհուրդն անձան ծածկեալն յազգաց եւ  
յանիտեանց. յայտնեցաւ իջմամբ հրեշտակա-  
պետին այսօր առ կոյսըն Մարիամ. \* զոր առ Տէր  
ունիմք բարեխօս վասն անձանց մե ըոց: Անժա-  
մանակն առ ի՝ Հօրէ եւ անմարմին ծոցածին  
ծընոննդ. այսօր աւետեօքըն Գաբրիէլն մարմին  
զգեանն ի սրբոց կուսէն. զոր առ Տէր ուն: Ան-  
տանելին ի համայնից բովանդակիչ բնութեանց  
բնորից. պարագրի այսօր մարգասիրապէս յորո-  
վայնի անարատ կուսին. զոր առ Տէր ուն: Անե-  
րեւոյթ փառացըն Հօր նրկարագիր անյեղապէս.  
Ի ծառայական խոնարհի պատկեր ի՝ յարգանդի  
հոգևով մարբելոյ. զոր առ Տէր ուն: Անսահմա-  
նըն յեութեան սահմանելանցս էացնուցիչ. ի  
վեր քան ըզբան սահմանի այսօր յորովայնի

\* Եթէ սարկաւազ ոչ կայցէ՝ դպիրն ասացէ զբա-  
րողան:

որբուհւոյ կնուսին. զոր առ Տէր ուն: Ուրախու-  
թիւն տրտմեցելոյ բնութեանս բերկրեալ կոյս  
Մարինամ. զոր ողունաբեր աւետեօք կրեցեր  
զարւօնն ի քեզ զօրէնս սղջունի. առ նա միշտ  
բարեխօսեալ վասն անձանց մերոց:

Կամ զայս ասա. ԱԿ:

Նըշանան ամենայն թ խաչելըդ քո Քրիս-  
տոս. պահպանեալ զմեզ մարդասէր յաներեւոյթ  
թըշնամուն. \* զի դու միայն ես թագաւոր փա-  
ռանց օրհնեալ յաւիտեան: Որ ի վերայ սորա  
տարածեցեր զանարատ բազուկըս քո. եւ հեղեր  
զարիւնդ ի փրօկութիւն տիեզերաց. զի դու  
միայն: Ի միւսանգամ քո գալլատեանըն յե-  
րեւել սուրբ նըշանիս. արժանի արա ըզձառայս  
քո վերըտին նորոգման. զի դու միայն:

Ալէլուիա. ալէլուիա.

Յարեւու եհար զետրան իւր. եւ ինքն որպէս  
փեսայ զի երանէ յառազաստէ իւրմէ:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացոց թղթոյն է  
ընթերցուածս: Գ. 27:

Ղրեալ է. ուրախ լեր ամուլ որ ոչ ծնանե-  
իր. գոչեա եւ աղաղակեալ որ ոչդ երկնէիր. զի  
բազում են որդիք սկընդկիր առաւել քան զա-  
րամբւոյն: Այլ մեք եղբարք, ըստ Սահակայաւե-  
տեացն որդիք եմք: Այլ որպէս յայնժամ որ  
ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն որ ըստ  
հոգւոյն, նոյնպէս եւ այժմ: Այլ զէնչ ասէ  
զիր. ի բաց հան զաղախինդ եւ զորդի դորա, զի  
մի ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ որդւոյն

ազատի: Վասն որոյ, եղբարք, չեմք որդիք աղախ-  
նոյն՝ այլ ազատին, ազատութեամբն որով Քրիս-  
տոս զմեզ ազատեցոյց: Պինդ կացեք այսուհե-  
տեւ, եւ մի միւսանգամ ընդ լծով ծառայու-  
թեան մտանէք: Ե. 1:

Ալէլուիա. ալէլուիա:

Տեսցեն դու զորդիս որդւոց քոց. խաղա-  
ղութիւն ի վերայ Իսրայէլէ:

Ալէլուիա. ճրթիւ:

Ա-եդարան ըսո Ղա-խառն: Ա. 26:

† Ի Հօրէն ամենակալէ

Եւ յամենան վեցերորդի առաքեցաւ Գաբր-  
էրը՝ զնաց ի նմանէ հրեշտակն: 38:

Դո. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Քարոյ:

Սբի. Վասն ի վերուստ պահպանութեան ան-  
ձանց հաւատացելոց եւ հրաւիրելոցս ի միութիւն  
զՏէր աղաչեսցուք:

Քնն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղբի:

Աստուած յաւիտենական եւ արարիչ ամի, զքեզ:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Հայր սուրբ եւ օրհնեալ յամի, որ օրհնեցեր:

Ե- սպա դան զնշանն:

Քրչ. Սուրբ խաչուս: Աղբի, Պահպանիչ:  
Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՆԳԵՐՁԻ ՀԱՐՍՈՆԵԱՑ

ԿԱՍ ՀԱԼԱԻՕՐՀՆԷՔ.

Նախ Ժան զամենայն բերեն զչալան առաջի Ժահանային: Ե- այս կարգի կարարի:

Սրի. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուցուք. ընկալ: Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր: Ե- յասելն խոնկ արկանէ:

Հարահան ԲԿ:

Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգման. քանզի նորոգօղն էից Հոգին էջ ի սուրբ վերնատունն. որով նորոգեցան զապ առաքելցն: Այսօր հողանիւթեայ բնութիւնս ցընծայ ընդ Հօր հաշտութեան. քանզի որ եբարձ զՀոգին ի մարդկանէ զմարմին եղելց. դարձեալ վերջստի՞ն ըզնոյն պարզեւէ: Այսօր մանկունք էկեղեցւոյ տօնեն ցընծութեամբ զգալուստ սուրբ Հոգւոյն. որով զարդարեցան ի զգեստըս լուսափայլս եւ գերապայծառս. երգեն ընդ սրբեանն զերեքարբենին:

Փառք Հօր: Այժմ եւ միշտ:

Սիրոյ անմահ փեսային եղեր դու մայր Մարիամ. բարեխօսեա վառն մեր ի յայնմ անուր անհղին:

Աղբի:

Քհն. Օրհնեա ի Բրիստոս Աստուած մեր հոգեւոր օրհնութեամբ զՏանդերձս. Ե-այն:

Քարոզ:

Սրի. Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զե սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց. եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Քհն. Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց:

Դպ. յայնիւ, Հայր մեր որ յերկինս:

Ե- ապա երբան ի արուն հարսինն, Ե- անէն զնա փեսայն:

ԿՈՒՍԻ ՊՍՍԿԻՆ.

Ե- առնո- Ժահանայն զաջ յերն հարսինն Ե- որայ յաջ յերն փեսայնն, Ե- ասէ.

Առեալ զձեռն Եւայի, տուեալ ի յաջն Ադամայ, Ե-այն:

Հարահան ԳԿ:

Վայեալ ի մեզ եւ ողորմեա մեզ Բրիստոս. \* որ ունիս բազում գըթութիւն: Ո՛ր հայրդ ես որբոց. եւ դատաւոր այրեաց Բրիստոս. որ ունիս: Ո՛ր պըսակիչդ ես սրբոց. լըր եւ մեզ աղօթիւք սոցա Բրիստոս. որ ունիս:

Մայր եւ կոյս աղանիս Բրիստոսի. որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. \* քեզ Երանեն ամենայն ազինք: Մաքուր աղաւնի՞ եւ հարսն երկնից Մարիամ. տաճար եւ անթո՞ն Աստուծոյ Բանին. քեզ Երան: Քեւ հաճեցան իմանալիքն ընդ հոգեղէնքս. եւ քեւ մերձեցաք ի փայտն կենաց. քեզ Երան:

Աղջիկ :

Քհն. Տէր Աստուած յաւիտենական, որ զան :  
Խաղաղութիւն քի ամենեցուն :

Տէր Աստուած, որ ի հեթանոսաց խօսեցար քեզ :

Ե- ասէ զԻրապա. Տեսէք որդեակք, Ե-այլն :

Ե- նոի հարցանէ զԵսայի :

Քհն. Որդեակ իմ, մինչեւ ի մահ տէր ես :

Փետայն. Այս, հայր սուրբ, տեր եմ հրա-

մանաւն Աստուծոյ :

Ե- ապա հարցանէ հարսինն :

Քահանայն. Որդեակ իմ, եւ դու մինչեւ ի  
մահ հնազանդ ես :

Հարանն. Այս, հայր սուրբ, հնազանդ եմ  
ըստ հրամանին Աստուծոյ :

Ե- ասէ քհն. Այս բանիս վկայ Աստուած է :

Ե- նոի ասէն. Այս, հայր սուրբ :

Ե- ասէ քհն. Աստուած ի մէջ սոցա, եւ սոքա  
մի սասանեացին. Ե-այլն :

Ելէ պարարտ ու լինէ հետ պատկին՝ յայս՝ վայ-  
րէ իսկոյն ասէն

Հարական Գ. 2 :

Ուրախ լեր սուրբ եկեղեցի. քանզի Քրիս-  
տոս անբայն երկնից այսօր պըսակեանց ըզքեզ խա-  
չին իւրով. եւ զարդարեաց զամուրբս քոս՝ պան-  
չելի փառօք իւրով քի : Խընդա յոյժ դու սարը Սիրոնի.  
քանզի երկն ըս երկինք եղէն այսօր վերըստին քո՝  
նորօգմամբ. եւ թագաւորն երկնաւոր հաճե-  
ցաւ բընակել ի քեզ : Ընդ դասս երկնաւոր զօ-  
րացըն վերառեալ տօնեմք քեզ այսօր զանդա-

դար փառատրութիւնս. ուրախ լեր հարսն անա-  
րատ անբընին քո խորհրդով :

Ալեյուհա. ալեյուհա :

Տէր ի զօրութեան քում ուրախ եղեցի թա-  
գաւորն. ի փրկութեան քում ցնծացէ յոյժ :  
Պօղոսի Առաքելոյն յեփեսացոց թղթոյն է  
ընթերցուածս : Ե. 22 :

Պանայք իւրեանց արանց հնազանդ լեցին  
իբրեւ Տեառն. զի այր է գըլուկ կնոջ, որպէս եւ  
Քրիստոս գըլուկ է եկեղեցոյ, եւ ինքն է փրկիչ  
մարմնոյ : Այլ որպէս եկեղեցի հնազանդ լինի  
Քրիստոսի, նոյնպէս եւ կանայք իւրեանց արանց  
յամենայնի : Արք՝ սիրեցէք զկանայս ձեր, որպէս  
եւ Քրիստոս սիրեաց զեկեղեցի, եւ զանձն իւր  
մատնեաց վանն նորա. զի զնա սրբեաց սրբու-  
թեամբ աւազանին բանիւ. զի կացուցէ ինքն  
իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի ունիցի  
ինչ արատ կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ  
յայնպիսեաց. այլ զի իցէ սուրբ եւ անարատ :  
Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝  
որպէս զիւրեանց մարմնս. որ սիրէ զկին իւր՝  
զանձն իւր սիրէ : Չի ոչ որ երբեք ատեայ զանձն  
իւր, այլ անուցանէ եւ դարմանէ զնա, որպէս եւ  
Քրիստոս զեկեղեցի. զի անդամք եմք մարմնոյ  
նորա, ի մարմնոյ նորա եւ յակերաց նորա : Վասն  
այսորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր իւր,  
եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղեցին եր-  
կըքին ի մարմն մի : Խորհուրդս այս մեծ է, բայց  
ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի : Այլ եւ  
դուք նոյնպէս մի ըստ միոյն. զի իւրաքանչիւր  
որ զիւր կին այնպէս սիրեաց իբրեւ զիւր անձն,  
եւ կին երկնչեցի յառնէ իւրմէ : 33 :

Ալէլուիա. ալէլուիա:

Կացցէ գշխոյ ընդ ալմէ քուճմէ, ի հանդերձս  
ոսկեհոռոս զարդարեալ եւ պաճուճեալ:

Սրի. Որթիւ:

Քհն. Խաղաղութիւն ՚ի ամենեցուն:

Դո. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրի. Երկիւղածութեամբ լուարուք:

Քհն. Սրբոյ աւետար. որ ըստ Մատթ: ԺԹ. 2:

Դո. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սրի. Պաօստուծ:

Դո. Ասէ Աստուած:

† Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ գնացին զՏեա նորա ժողովուրդք բա-  
զումք. Վերջ՝ եւ որ զարձակեալն առնէ՝ շնայ: 9:

Քարոզ:

Վասն ուղղելոյ զգնացս մեր ի ճանապարհս  
խաղաղութե՛, զՏԻ աղաչ: Քհն. Տէր ողորմեա:

Վասն ցրելոյ ի մէջ զամենայն խորհուրդս  
չարին, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս  
եւ առաքինի վարս, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամե-  
նազօր աջոյն իւրոյ, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվա-  
ղակի ընդ ոտիւք մերովք, զՏԻ աղ: ՏԻ ողորմեա:

Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ  
եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր  
աղաչեսցուք: Յիշեա ՏԻ եւ:

Եւ եւս եւ վն միաբանութե՛ ճշմարիտ եւ նք  
հաւատոյս մերոյ, զՏէր աղաչ: Տէր ողորմեա:

Չանձինս մեր եւ զվիմեանս Տէն Աստուծոյ  
ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տեառնդ:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի:  
Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղբիւ:

Տէր Աստուած ամենակալ, ի քէն օրհնեցաւ:  
Խաղաղութիւն ՚ի ամենեցուն:

Օրհնեալ ես Տէր Աստուած ամենակալ, որ ար:

Հարական ԲԿ:

Ո՛վ երանելի՛ գ ամենեցուն. տիեզերական  
իշխանութեամբ ընկալար ի Քրիստոսէ՛ ըզթա՛գ  
պարծանաց. \* ո՞հ վ Թէ՛ողոն մե՛ծ թա՛գաւոր.  
վասն մեր բարեխօսեա առ թագաւորն երկ-  
նաւոր: Ո՛ր քոյին նք անձթիւքըդ վանեցեր ըզ-  
թըշնամին. կոխելով ըզսատանայ. ընդ երկնայ-  
ինսն դասեցար. ո՞հ վ Թէ՛ող: Ո՛ւստի եւ մե՛ք  
հաւատացեալքս. տօնեմք զքօ յիշատակս.  
օրհնութիւնն անաքելով ըզքեզ պրսակողին.  
ո՞հ վ Թէ՛ողոն մե՛ծ թա՛գաւ:

ՊՍԵԿ ՎԵՐԱՑՈՒՑԱՆԵԼՈՑ.

Հարական ԳԿ:

Ա՛յսօր մարտիրոսաց դասքն ցնծացեալ  
բերկրին ընդ անձ Տեառն Քրիստոսի՛ որդւոյն  
Աստուծոյ: Չայն ի՛ յերկնից վճկայեալ անէ  
եկայք օրհնեալք չօր իմոյ՛ ժա՛ռանգորդք  
երկնից խորանացն: Լըցէք ըզտեղե անկընցն  
անպատմբողական թըշնամոյն. որ ի՛ յերկնից  
վայրանկեալ:

Ածն. Մայր եւ կոյս աղանիսն Քրիստոսի. որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. \* քեզ էրանեն ամ անինք: Մաքրուր աղանիսն եւ հարսն երկնից Մարիամ. տաճար եւ անթոն Աստուծոյ Բանին. քեզ էրան: Քեւ հաճեցան ի մանալէքն ընդ հոգեղէնքս. եւ քեւ մերձեցաք ի փայտըն կենաց. քեզ էրան:

ԽԷ. Յանթօղ եւ զնոր օրհնութիւն միշտ ի բարձունս էրդեցոնք. թագաւորին Քրիստոսի հաւատացեալ ժողովուրդք: Որ եկն ի լուսանորել զընտրեալ սուրբ զեկեղեցի. եւ պլն տակեաց սուրբ խաչին. նրմա ըզփառս էրդեցոնք: Այսօր եւ մեք տօնեցոնք զնաւահատիս սուրբ խաչին. եւ փրկողին մատուցոնք փառք եւ պատիւ յաւիտեան:

Փառք Հօր եւ: Այժմ եւ միշտ:

Անթառամ պրսակըն ձեզ աւանդեալ մընայ. քան զականքս պատուականքս գերագոյն հրաշխք. որք վանեալ ըզթըշնամին խորտակեցինք:

Ալէլուիա. ալէլուիա:

Աթոս քո Աստուած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քոյ:

Պողոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թըղթոյն է ընթերցուածս: Բ. 9:

Այամիմ լինել զկանայս ի զարդ խոնարհութեան՝ ակնածութեամբ եւ զգաստութեամբ

զարդարել զանձինս. մի ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով, կամ ի հանդերձս պաճուճեալս. այլ որպէս վայելէ կանանց զաստուածպաշտութիւն յանձն առելոց գործովք բարութեան: Այն մարդ ցածութեամբ ուսցի ամենայն հնազանդութեամբ: Այլ ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, եւ ոչ ճոխաբան լինել քան զայր մարդ, այլ ի լութեան կալ: Ձի Ադամ նախ ստեղծաւ՝ եւ ապա Եւա: Եւ Ադամ ոչ պատրեցաւ այլ կինն պատրեցաւ եւ յանցեաւ. բայց կեցցեն վասն որդեճնութեանն՝ եթէ կայցեն ի հաւատս եւ ի սէր եւ ի սրբութիւն պարկեշտութեամբ: 15:

Ալէլուիա. ալէլուիա:

Կացցէ դշտոյ ընդ աջմէ քու մէջ. ի հանդերձս ոսկեհուսս զարդարեալ եւ պաճուճեալ:

Որթիւ:

Աւետարան քոյ Յովաննոս: Բ. 1:

† Ասան փառաց Տեառն մերոյ Յնի Քնի:

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին. վերջ հաւատացին ի նա աշակերտքն նորա: 11:

Քարոյ:

Սբի. Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց. ընկայցի զննդրուածս սրտից մերոց. թողցէ զյանցանս մեր. ողորմեցի ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան նորա: Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով արդարութեան վաստակել ի գործս բարեաց: Ձի զողորմութեան

զընորհն իւր՝ արասցէ ի վերայ մեր Տէրն ամե-  
նակալ. կեցուցէ եւ ողորմեսցի:

Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ.:

**Աղօթի:**

Տէր Աստուած մեր, որ յամ ժամ ընդ մեզ:

Ե- սպա Բաբելոնի քիչիկի առնո- ի յեան ի-ր  
Կահանայն, ե- սակ զաղօթնս.

Տէր Աստուած մեր, որ զամենայն ինչ իմաս-  
տութեամբ արարեր: Ե- որեառնաբեր զբաշտմն:

Ե- առնոն զԲաբելոնի քիչիկի նոցա:

Քրդ. Սուրբ խաչիւս: Աղօթի. Պահպանիչ:

Դպ. յայնի- շայր մեր որ յերկինս:

Քհն. Ձի քո է արքայութիւն եւ զօրութիւն:

Օրհնեալ եղերուք ի շնորհաց:

**ԵՐԿՐՈՐԿ ՊՍԸԿԻ**

Կանոնն զոնի բան զԿրօսի պատմն առեւ ինչ վասն  
սարխաւաբի եւ վասն դպրաց. ե- ալիւր-ի, քերտ ե-  
առեպարան՝ նոյն են: Միայն յաւարտ պղծեցն Տէր  
Աստուած մեր որ ի հրեշտակաց՝ իսկոյն Կարող:

Սբի. Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց.  
ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:  
Կամ Խնդրեսցուք հաւատով միաբ. երեւ 116:

Ե- յեո պղծեցն Աճ մշտնջենաւոր, ե-այնն.

Քրդ. Սուրբ խաչիւս: Աղօթի: Պահպանիչ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

**ԿԱՆՈՆ ԹԱՂՍԱՆ ՆՆՉԵՑԵԼՈՑ**

ԱՅՆ Ե

ԱՂԽԱՐՀԱԹԱՂԻ ԿԸՄ ՄԵԺԻ ԹԱՂՍԱՆ.

**ՏԱՆ ԿԱՐԳՆ.**

Սբի\*. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեա-  
ցուք. ընկալ: Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր  
եւ Որդ: Ե- յասելն իոննի արխանի:

**Կանոնաբերի ԱՉ:**

Պատեա՛ Տէր. զայնոսիկ զիք դատեն զին.  
այլ լուիս. մարտիր ընդ այնոսիկ ոյք մարտնչին  
ընդ իս. այլ լուիս:

Առ ըզզէն եւ զասպար քո. եւ արի յօգնել  
ինձ. հան ըզուր քո ընդդէմ հալածչաց իմոց.  
արգել զնոսա. եւ սոս դու ցանձն իմ թէ փր-  
կութիւն քո ես եմ. այլ լուիս:

Ամաչեսցեն եւ յամօթ լիցին ոյք ինդրեին  
զանձն իմ. դարձցին յետս եւ ամաչեսցեն ոյք  
խորհէին ինձ չար. այլ լուիս:

Եղեցին նոքա՛ որպէս փոշի առաջի՛ հողմոյ.  
եւ հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա. այլ լուիս:

Եղեցին ճանապարհք նոցա ի խաւար եւ ի  
զայթա՛ղղութիւն. եւ հրեշտակ Աստուծոյ հա-  
լածեսցէ զնոսա. այլ լուիս:

\* Եթէ սարկաւազ ոչ կայցէ՛ դպիրն ասացէ զբա-  
րոզն:

Ի նանիւր Թագուցին ինձ որոգայթ յապա-  
կանութեան իւրեանց. եւ ի նանիւր նախատե-  
ցին զանձն իմ. անէ լուհիւս:

Փի. Տէ՛ր յերկի՛նս է ողորմութի՛ք քո՛. ճշմար-  
տութի՛ք քո՛ մի՛նչ եւ յամսս. \* անէ լուհիւս. անէ լուհիւս:

Արդարութիւն քո որպէս լերինք Աստուած.  
իրաւունք քո որպէս խորք բազումք. զմարդիկ  
եւ զանասուն կեցոցանես դու Տէր. ալէլ. ալէլ:

Որպէս զի բազում արարեր զողորմութիւն  
քո Աստուած. այլ որդիք մարդկան ի հովանի  
թեւոց քոց յուսացին. ալէլ. ալէլ:

Արբեցին նոքա ի պարարտութենէ տան  
քոյ. եւ զուղես փափկութեան քոյ տացես ըմ-  
պել նոցա. ալէլ. ալէլ:

Ի քէն է Տէր աղբիւր կենաց. եւ լուսով  
երեսաց քոց տեսանեմք ըզլոյս. ալէլ. ալէլ:

Ծագեա՛ զողորմութիւնս քո՛ ոյք ճանաչեն  
զքեզ. զարդարութիւնս քո՛ ոյք սուղիղ են սրբ-  
տիւք. ալէլ. ալէլ:

Մի՛ եկեացէ ի վերայ մեր ոտն ամբարտաւա-  
նից. եւ ձեռք մեղաւորաց մի դողացուցեն ըզ-  
մեզ. ալէլ. ալէլ:

Ա՛նդ անկցին ամենքեան՝ ոյք գործեն զան-  
օրէնութիւն. մերժեցին եւ այլ մի կարացեն  
հաստատել. ալէլ. ալէլ:

Փառք Հօ՞ր եւ Որդւոյ՛ եւ Հոգւոյն՛ սրբոյ.  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանքս յաւիտենից.  
ամէն. անէ լուհիւս. անէ լուհիւս:

Քհն. Ի ի՛նչ. Սովաւ լուսաւորեցան արարածք  
ամենայն. եւ այն:

Քարոյ:

Սրկ. Ա ի վերուստ խաղաղութե եւ փրկուե՛  
անձանց մերոց, զՏէր աղ: Քհն. Տէր ողորմեա:  
Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի  
աղաչանաց մերոց, զՏէր աղ: Տէր ողորմեա:  
Վասն քաւիչ եւ ներող լինելոյ Աստուծոյ  
ի վերայ մեղաց մերոց, զՏէր աղ: Տէր ողորմեա:  
Վասն թողոյ մեզ զամենայն յանցանս մեր  
զկամայ եւ զակամայ, զՏէր աղ: Տէր ողորմեա:  
Վասն զի մի ընդ խոտանս գտանիցիմք  
յաւուրն պատասխանատուութեան, զՏէր աղա-  
չեսցուք: Տէր ողորմեա:

Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ  
եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր  
աղաչեսցուք:

Եւ եւս եւ վն միաբանութե՛ ճշմարիտ եւ սբ  
հաւատոյս մերոյ, զՏէր աղաչ: Տէր ողորմեա:  
Զանձինս մեր եւ զմիեանս Տնն Աստուծոյ  
ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տեառնդ:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի:  
Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղթի:

Աստուած յաւիտենական, անսկիզբն, անեղան:  
Խաղաղութիւն չ՝ ամենեցուն:  
Հայր մեր, որ յերկինս եւ յերկրի եւ յսմի. սբ:

Ալէլուիա. ալէլուիա:

Ահա չափով եդիր զաւուրս իմ. եւ կար  
զօրութեան իմոյ որպէս ոչինչ է առաջի իմ.  
սակայն ընդունայն է ամենայն մարդ մտեղի:

Պօղոսի Առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ  
Թղթոյն է ընթերցուածս: Ա. 3:

Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեանն  
մերոյ Յիսուսի Քրիստոսի. Հայր գթութեանց,  
եւ Աստուած ամենայն մխիթարութեան. որ  
մխիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս մեր.  
առ ի կարող լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝  
որ յամենայն նեղութիւնս իցեն, մխիթարու-  
թեամբն՝ որով մեք մխիթարիմք յԱստուծոյ:  
Ջի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ի  
մեզ, նոյնպէս եւ ի ձեռն Քրիստոսի առաւել  
լիցի եւ մխիթարութիւնն մեր: Ջի եթէ նեղիմք,  
վասն ձերոյ մխիթարութեան եւ փրկութեան.  
եւ եթէ մխիթարիմք, վասն ձերոյ մխիթարու-  
թեւ եւ փրկութե. որ յաջողեան է համբերութիւն  
նոյցն չարչարանաց զոր եւ մեքն չարչարիմք. եւ  
յոյսն մեր հաստատուն է վասն ձեր. քանզի  
գիտեմք՝ եթէ որպէս կցորդ եմք չարչարանացն՝  
նոյնպէս եւ մխիթարութեանն: Քանզի ոչ կա-  
միմ տգէտս լինել ձեզ եղբարք՝ վասն նեղու-  
թեանն մերոյ եղելոյ յԱսիա. զի առաւել քան  
զկար մեր ծանրացաք, մինչեւ անյոյս լինելոյ  
մեզ եւ ի կենաց: Այլ անձամբ յանձինս ըզ-  
վճիռ մահու ընկալաք. զի մի յանձինս ապա-  
տան իցեմք, այլ յԱստուած՝ որ յարուցանէ զմե-  
ռեալս. որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ՝  
եւ փրկեսցէ. քանզի յուսացեալ եմք՝ եթէ  
տակաւին փրկեսցէ օգնականութեամբ աղօթից  
ձերոց վասն մեր: 11:

Ալէլուիա. ալէլուիա:

Չայնիւ իմով ես առ Տէր կարգացի, ձայնիւ  
իմով առ Աստուած. եւ նայեցաւ առ իս:

Սբի. Ո՞րթիւ:

Քհն. Խաղաղութիւն ՚ի ամենեցուն:

Դո. եւ ընդ հոգւոյդ քում:

Սբի. Երկիւղածութեամբ լուարուք:

Քհն. Սրբոյ աւետար. որ քառօրվհան: Ե. 19:

Դո. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սբի. Պառսխումէ:

Դո. Ասէ Աստուած:

՚ի Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. վերջ՝ ոչ  
պատուէ զՀայր զառաքիչն նորա: 23:

Ջայն ասենայն որս կարգաւ յերես 55 — 60:

Երբ. Փառաց ի փառս: Քահանայք եւ ժող:  
Ե- որն փ յԱրարիչ եւ մարդասիրէն կամ յԵս  
ասացիէն՝ բար առար պարշաճի:

Մղ. Հոգւոյ հանդուց: Քարող. Վասն հոգ-  
ւոյ հանդուց: Աղջե. Քրիստոս որդի Աստուծոյ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

Ե- Բարնան զննջեցելն որանել յեկեղեցի. ե-ի  
ձանապարհին ասէն շարական հանգստեան կամ խաչի:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿՈՐԳՆ.

Ե- յեկեղեց-ումն այս կարգ կարարի:

Սբի. եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչես-  
ցուք. ընկալ: Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր:  
Ե- ասէն հանգստեան

Շարական Գ. 4:

Ի-անդ Աստուած որ ի ծոց Հօր. վասն  
մերոյ փրկութեան ՚ի յերկնից խոնարհեցանք.

զի զմեզ նորոգեցեսի կեանս. Աստուած Հարցըն մերոց: Որ հանդերձեալ ես գալ փառօք Հօր. զարթուցանել ըզննջեցեալսն ի սուրբ անոննրդ քո. նորոգեա եւ ըզմեր ննջեցեալսն. Աստուած Հարցըն մերոց: Անմահութեանց տըճող Քրիստոս եւ պարգեւիչ կենդանութեան. ի միւսանգամ գալըստեանն եւ յաշնարհական ատենին. Թո՞ղութիւն շնորհեա մեր ննջեցեալցն. Աստուած Հարցըն մերոց: Որ նըստի ընդ աջմէ Հօր ծընողի իւրոյ. եւ մարգասիրապէս խնամէ զարարածըս. բարձր արարէք ըզնա յաւիտեան: Որ ըզհոգեցեալ բնութիւն մարդկան նորոգէ իւր Ածութեամբն. եւ կենագործէ ի կեանս անմահ. բարձր արարէք ըզնա յաւիտեան:

ԱՅն. Լեանքն վիմածին աղբիւր յորդառատ. բարունակ ծաղկեալ այգի վայելուչ սրովբէ հողեղէն. բարունուոյ Քանին տուն անօրէնութեան տաղաւար Հողունն. \* առ ծընեալն ի քէն միշտ բարեխօսեա անգաղար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր ննջեցեալցն: Փափկութեան դրախտին բացող բանալի. Քրիստոսի բարձող նըմանող երկնից. սափոր ոսկեղէն լի մանանայիւ. գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ տաճար լուսոյ մայր. առ ծընեալն ի: Յօղ քայրաճաւալ ցանկալի զուարթնոցն. նիւթեղէն սրովբէ գեղ մարգըրտափայլ հիմն եկեղեցւոյ. մաքուր անլանի անպ հովանաւոր սուրբ կոյս Մարիամ. առ ծընեալն ի:

ԽԷ. Ո՛վ պահապան որ ծաղեցար յեղեմայ. նշան յաղթութեանն ընդդէմ աներեւոյթ թըշնամունն: Գո՛ւ փակելոյ դրախտին բացող. եւ առաջնորդ աւազակին. որ զըոցեղէն սուրբն կապտեա՞յ անեղին հրամանան: Փառք Հօր: Այժմ եւ միշտ: Քեւ ցընծան ըստօրայինքս ամենայն ի միւսանգամ քո գալըստեանն. եւ յաւեժք զուարճանա՞ն. դանպ անմարմնոցն անեկցս:

Ալեյուրիա. ալեյուրիա:

Երանի ամենեցուն որ բնակեալ են ի տան Տն, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ: Գօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: Գ. 12:

Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտք իցէք իննջեցեալցն, զի մի տրտմիցիք որպէս եւ այլքն՝ որոց ոչ գոյ յոյս: Եթէ հաւատամք՝ եթէ Յս մեռաւ եւ յարեաւ, նոյնպէս եւ Աստուած ըզննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա: Բայց զայս ասեմք Տն բանիւ, եթէ մեք որ կենդանիքս եմք մնացեալք՝ ի գալտեանն Տն ոչ ժամանեմք ննջեցեալցն: Զի ինքն Տեր հրամանաւ, ի ձայն հրեշտակապետի եւ ի փող Աստուծոյ իջանէ յերկնից. եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն: Ապա եւ մեք որ կենդանոյն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տն յօղս, եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տն լինիցիմք: Այսուհետեւ մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսպիւրք: 17:

Ա՛լէ՛լուիա. ալէ՛լուիա:

Բարձր առնեմ զքեզ Տէր զի ընկալար զնս.  
Եւ ոչ ուրախ արարեր զԹՆամբնս իմ յիս:

Ո՛րթի՛ւ:

Ա-ե-ր-բ-ա-ն ըս-ր Յովհաննոս: ԺԲ. 24:

† Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցո-  
րենոյ. վերջ՝ պատուեսցէ զնա Հայրն իմ: 26:

Քարոյ:

Սրէ՛. Ա անս հրատարելոյ անձին ննջեցելոյս,  
զՏէր աղաչեսցուք: Քհն. Տէր ողորմեա:

Վասն քաւութե մեղաց եւ թողութե յան-  
ցանաց սորա եւ մեր, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Վասն առաջնորդելոյ սմա յանստուեր օթե-  
վանս, զոր պատրաստեաց Որդին միածին ի տան

Հօր իւրոյ, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն լսելոյ սմա զձայն կենարար փողոյն,  
եւ վերանալ ընդ առաջ փրկչին, զՏէր աղա-  
չեսցուք: Տէր ողորմեա:

Վասն արժանի լինելոյ սմա դասել յաջա-  
կողման դասուն, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Եւ եւս եւ վն միաբանութե ճշմարիտ եւ նք  
հաւատոյս մերոյ, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Չանձինս մեր եւ զիմ: Քեզ Տեառնդ:  
Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի:

Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղօթի՛ս:

Որ թագաւորդ ես յաւիտենից Քս Աճ եւ եւս:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Գթած եւ մարդասեր Աստուած, հանգո զհոգի:

Չայն ափնայն պես կարգաւ յերես 55 — 60:

Երբ. Փառացի փառու: Քահանայք եւ ժող:  
Եւ որոն զի յԱրարիչ եւ մարդասիրէն կամ յես  
ասացիէն, ըս-ր — — — պարզա՞նի:

Աղա յղի. Հողւոյ հանգուց: Քրդ. Վասն  
հողւոյ հանգ: Աղօթի. Քրիստոս, Որդի Աստու-  
ծոյ անտխակալ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

ԳԵՐԵՉՄԱՆԻ ԿԱՐԳՆ.

Յորժամ մեղինան ի գերեզմանն՝ ասէն

Հարուան Գ2:

Մերձեցայ ես ի դժուրն գերեզմանին. եւ  
եհնս ինձ ժամանակ մըտանեմ՝ Լ ի յարգանդ  
երկրի. յորմէ ստեղծեալ եմք ամենեքեան.

\* Բրժիչի իմաստուն եւ ճարտարագետ. բժիչկեա  
զհողւոյ իմ զհիւանդութիւն. արարող եւ յո՛յս  
փրկութեան մերոյ: Ե՛ղիցի՛ ձեռնք քո պահա-  
պան անձին իմոյ. ե՛ւ ա՛յլ քո բարի առաջնոր-

դեսցէ ինձ ի յարդարութիւն. բրժիչի իմ: Բը-  
խեսցէս առ իս ըզգութ մարդասիրութեանդ.  
Եւ յաղբերէդ կենանց լըւացես զմեզս անձին  
իմոյ. բրժիչի իմ: Կեցցէ անձն իմ օրհնեսցէ

ըզքեզ. զամենայն անուրբս կենանց իմոյ. եւ առ  
քեզ ապա՛ւինիմ հովի՛ւ բանաւոր հօտի.  
դարձն զմարբեայս ի հօտ քո՝ Քրիստոս. բրժիչի  
իմաստուն եւ:

Ե- հասեալ է քերէզմանն՝ ասէն յայնի-

Սաղմոս ՃԺԳ. «Դքայայն»:

Կց. Դարձ անձն իմ ի հանգիստ քո. զի ՏԻ կոչեաց ըզքեզ:

Փի. Միրեցի՞ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց, զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս. եւ ես յաւուրս իմ կարդացի՞ առ նա:

Շքջեցան զինեւ երկունք մահու. եւ վիշաք դժոխոց գտին զիս:

Չնեղութիւն եւ զանձկութիւն գտի. եւ զանուն Տեառն կարդացի:

Ո՛ Տէր, փրկեա զանձն իմ. ողորմած Աստուած մեր ողորմի, եւ պահէ զաղայս Տէր:

Ես խոնարհ եղէ եւ Տէր կեցոյց զիս. — Դարձ անձն իմ ի հանգիստ քո. զի Տէր կոչեաց ըզքեզ:

Պողոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: ԺԵ. 12:

Ապա եթէ քրիստոս քարոզի՞ թէ ի մեռելոց յարուցեալ է, զիմորդ ասէն ոմանք ի ձեռք՝ եթէ յարութիւն մեռելոց չէք: Եթէ յարութիւն մեռելոց չէք, ապա եւ քրիստոս չէ յարուցեալ. եւ եթէ քրիստոս չեցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են եւ հաւատքն ձեր. եւ գտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ, զի վկայեցաք զԱստուծոյ՝ թէ յարոյց զքրիստոս. զոր ոչն արդեօք յարոյց, եթէ մեռեալք ոչ յառնիցեն: Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն, ապա եւ քրիստոս չէ յա-

րուցեալ. եւ եթէ քրիստոս չեցէ յարուցեալ, ընդունայն են հաւատք ձեր, եւ տակաւին ի նմին մեղս կայք: Իսկ արդ ողբն չեցինն ի քրիստոս՝ կորեան արդեօք: Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ի քրիստոս, ողորմելի եմք քան զամենայն մարդիկ: Այլ արդ քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց: Քանզի մարդով եղեւ մահ, եւ մարդով յարութիւն մեռելոց. որպէս Ադամուն ամենեքին մեռանին, նոյնպէս եւ քրիստոսիւ ամենեքին կենդանացին. իւրաքանչիւր յիւրում կարգի. նախ քրիստոս, եւ ապա քրիստոսեանք ի զալուստեան նորա, եւ ապա կատարած: 24:

Ալէլուիա. ալէլուիա.

Տէր լուր աղօթից իմոց եւ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. մի դարձուցաներ զերեսս քո՝ յինէն:

Ալէլուիա. օրթի:

Աւետարան ըսո Յովհաննոս: Ե. 24:

‡ Տէրն մեր Յն քս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ. վերջ՝ որ առաքեացն զիս: 30:

Քարոզ:

Սբէ. Վասն ուղղելոյ զգնացս մեր ի ճանապարհս. Երեւ 176:

Աղբի:

Աստուած հոգւոց եւ ստեղծիչ մարմնոց, տէր:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Արդ խնդրեմք ի քէն՝ թագաւոր թագաւորաց:

Ապա սարկաւազն առնու հող ափով, եւ մա-  
րուցանէ խնամային. եւ խնամայն պետանաբրէ  
ասելով. Օրհնութիւնն աստուածային իջցէ ի  
հող մահու տրին. եւայլն: Եւ ասէն ի խն-

Սաղմոս ԻԲ:

Տէր հովուեացէ զես, եւ ինձ ինչ ոչ պակա-  
սեացէ:

Ի վայրի դալարուջ անդ բնակեցոյց զես. եւ  
առ ջուրս հանգստեան սնոց զես:

Գարձոյց զանձն իմ առ իս, եւ առաջնոր-  
դեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն  
անուան իւրոյ:

Թեպէտ եւ զնացից ես ի մէջ ստուերաց մա-  
հու, ոչ երկեացց ի չարէ, զի դու Տէր ընդ իս ես:

Յուպ քո եւ գաւազան՝ նոքա մխիթարես-  
ցեն զես:

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան. ակն-  
յանդիման նեղաց իմոց:

Օձեր իւզով զգլուխ իմ. բաժակ քո որպէս  
անապակ արբեցոյց զես:

Ողորմութիւն քո Տէր գհետ իմ եկեացէ  
զամենայն առուրս կենաց իմոց, բնակել ինձ ի  
տան Տեառն ընդ երկայն առուրս:

Եւ սխանին Յորդորակ.

Ճանապարհ բարի քո. եւ ճշմարտութիւն.  
առաջնորդ հոգւոց մերոց. յերկրէ ի յերկինս:  
Գուռըն կենաց մրտից Յո. Ա՛ճ ճրճարիտ. մոյճ  
եւ զմեզ առ Հոյրըզ քո. Հոգւովըզ սրբով:

Մաղևանձ:

Քհն. Տէր ուղղեա զգնացս մեր. եւայլն:

Քարոյ:

Սրբ. Աղաչեացուք զամենակալն Աստուած,  
զի յաջողեալ ուղղեացէ զճանապարհս ծառայից  
իւրոց ի բարի եւ ի խաղաղութիւն: Ամենակալ  
Տէր Աստուած մեր կեցս եւ ողորմեա:

Աղբնձ:

Առաջնորդ կենաց եւ պարգեւիչ խաղաղութե:  
Խաղաղութիւն քո ամենեցուն:

Օրհնեալ ես Տէր Աստուած փրկիչ մեր, որ յամ:

Եւ արխանէ խնամայն զնոյն ի քրեղմանն՝ ասե-  
լով. Հոյս օրհնութեան իջցէ ի գերեզմ. եւայլն:

Եւ ի վնցանէն զննջեցեալն ի քրեղման. եւ սինչ  
ճաճիւն հոյով զմարտինն՝ ասէն յայնչ.

Ո՛ղորմած Աստուած քաւեա զանօրէնու-  
թիւնս իմ:

Հարական Բկ. Կորդով:

Հաւատ ունեւրով հոգի՛ խաղաղութեան.  
Երթ առ արարիչըն հայցեւրով. Ա՛ճ իմ հանդոս:

Սղ. Ես ասացի՛ ի զարմանալ իմում. թէ  
ամենայն մարդ սուտ է:

Հր. Հաւատ ունեւրով. որպէս ի վերոյ:  
Սղ. Ըզճանապարհս իմ ուղեղ արա ինձ  
ըստ բանի. քնւմ. և մի տիրեցեան ինձ ամ մեղք:

Հր. Հաւատ ունեւրով. որպէս ի վերոյ:  
Փանք Հօր եւ: Այժմ եւ միշտ:

Ընդ Քրիստոսի՛ պահելով. յողթող լեցոնք  
փորձողն. եւ ընդ հրեշտակս երգեցոյնք.  
փառք ի բարձունս Աստուծոյ:

Եւ սուսն Բաբառն.

Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ. եւ յերկիր  
 խաղաղութիւն. ի մարդիկ հաճութիւն: Եւ  
 օրհնութիւն քեզ ի բարձունս. օրհնեալ ես  
 Տէր Աստուած մեր. օրհնեմք ըզքեզ եւ դո՛ւ-  
 վե՛մք ըզքեզ: Խոստովանեմք Տէր ըզքեզ. եւ  
 երկիր պաղանեմք քեզ. փառաւորեմք ըզքեզ.  
 դո՛ւհանամք Տէր ըզքէն լատարն մեծի՛ փառաց  
 քոց: Տէր թագաւոր. սուրբդ երկնային. Աս-  
 տուած եւ Հայր ամենակալ: Տէր եւ Որդի՛ Հօր  
 միածին Յիսուս Քրիստոս եւ սուրբ Որդի: Տէր  
 Աստուած դառն Աստուծոյ. եւ Որդի՛ Հօր. որ  
 առեր ըզմերս ի կուսէն. սոյնմեցար. բարձեր  
 ըզմեզ անխորհի: Եւ արդ ընկալ զանշանքս  
 մեր. սուրբդ որ նբախն ընդ ալմէ՛ Հօր. սոյն-  
 մեաց մեզ: Չի՛ դու միայն սուրբ. դու միայն  
 բարձրեալ ես. դու միայն Տէր մեր. Յիսուս  
 Քրիստոս: Տէր եւ Հորդի՛ սուրբ որ ի փառքս  
 Աստուած ընդ Հօր. ամէն:

Եւ յամենայն ժամ օրհնեմք ըզքեզ. Տէր  
 եւ զովեմք զանուն սուրբ քո՛ յաբիտեան եւ  
 յաբիտեանս յաբիտենից: Արժանի արա՛ Տէր  
 զօրքս զայս խաղաղութեամբ եւ անանց մեղաց  
 պահեա՛ ըզմեզ: Օրհնեալ ես Տէր Աստուած  
 հայրցն մերոց. զովեալ եւ փառաւորեալ է  
 անուն սուրբ քո՛ յաբիտեանս ամէն: \* Օրհնեալ  
 Տէր. ուսո՛ ինձ զարդարութիւնքս քո՛. երեցս:

Տէր սպաւէն եղե՛ր մեր յանդէ՛ յանդ: Ես  
 անաշեմ Տէր ողորմես ինձ եւ բրժըլիեա՛ զանձն  
 իմ. ես մեղոյն քեզ: Յայց մեզ Տէր զողորմու-  
 թիւնքս քո. եւ ըզիրկութիւնքս քո՛ սուր մեզ:  
 Տէր ողորմութիւն քո յաբիտեան. ըզդորձքս  
 ձեռաց քոց մի անտես աններ: Տէր իմ ըզքեզ  
 սպաւէն ինձ արարի. ուսո՛ ինձ անեղ ըզլիմքս  
 քո՛ զն դու ես Աստուած իմ: Ի՛ քէն է Տէր  
 աղբիւր կենդանութեան. եւ լուսով երեսաց  
 քոց տեսանեմք ը զլոյս: Ծանգեա՛ զողորմու-  
 թիւնքս քո՛ սրբ ճանաչէն ըզքե՛զ Տէ՛մ՛ր:

Մաղեանս:

Քհն. Փառք, պատիւ եւ երկրպագութիւն  
 ի բարձունս Հօր եւ Որդ:

Երէ սոյնդէի:

Ե՛գին զես ի գբի՛ նե՛ր քնո՛մս քե՛ւմ. ի՛  
 խաւարի եւ ի ստուե՛նքս մա՛հնմ՛ս:

Տէ՛ր Աստուած փրկիւթե՛ ի՛մնմ՛ս.  
 ի տուէ՛ կարգացի. եւ գիշերի անանձմ՛ ջի՛  
 քո՛մս:

Քարոյ:

Սրէ՛. Ա՛յսն ի վերուստ պահպանութեան ի  
 Տեառնէ անձանց մերոց, եւ հաճոյական աղօթս  
 առնելոյ, զՏէր աղաչ: Քհն. Տէր ողորմես:

Ա՛յսն ընդունելոյ Տեառն Աստուծոյ զհոգի  
 հանգուցելոյս ի հանգստեան արդարոց, զՏէր  
 աղաչեսցուք: Տէր ողորմես:

Ա՛յսն թողոյ ամա զյանցանս զկամայ եւ  
 զակամայ, զՏէր աղաչ: Տէր ողորմես:

Վասն արժանի լինելոյ սմա՝ խաղաղութեամբ  
եւ մեծաւ յուսով սպասել տեսառնադարւսս  
փողոյն, զՏէր աղաչ: Տէր ողորմեա:

Վասն քաղցրաբարբառ լսելոյ սմա զաճաւոր  
ձայնն որ ասէ, եթէ արիք՝ աճա զայ ֆրիստոս,  
զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն համարձակապէս տեսանելոյ սմա զան-  
ապական եւ զանստուեր լոյսն, զՏէր աղա-  
չեսցուք: Տէր ողորմեա:

Վասն աչալըջութեամբ եւ առանց ամօթոյ  
կալ սմա առաջի արդար դատաւորին ֆրիստոսի,  
զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն տալոյ սմա տեղի ի հայրական ինամոցն  
յաջակողմեան դասուն, զՏ՛ր աղ: Տէր ողորմեա:

Վասն լսելոյ սմա զերանաւէտ զձայնն, եթէ  
եկայք օրհնեալք Հօր իմոյ ի տեղի հանգստեան,  
զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն պարգեւելոյ սմա զերկնային պսակն  
կենաց եւ անմահութեան, զՏ՛ր աղ: Տէր ողորմեա:

Վասն հրեշտակի խաղաղութեան աւան-  
դելոյ զհոգի սորա ի տեղի արդարոյն, զՏէր  
աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն առաքման շնորհաց մեծի եւ ամենա-  
ղօր աջոյն ֆրիստոսի ի հողանիւթեայ յարկ տա-  
պանի սորա, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Վասն կնքելոյ զգերեզմանս զայս նշանաւ  
խաչին իւրոյ մինչեւ ի դալուսան իւր սուրբ,  
զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն առաքելոյ զնորհոս Հոգւոյն սրբոյ ի  
սիրա լողաց հաւատացելոյ անուան իւրոյ, զՏէր  
աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն մխիթարելոյ զվշտագնեալս սրտիւք՝  
ի ձեռն ողորմուե իւրոյ, զՏ՛ր աղ: Տէր ողորմեա:

Վասն պահելոյ զմնացորդս սորա յամենայն  
հնարից սատանայի, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Վասն հոգւոցն հանգուցելոյ որք ճշմարիտ  
եւ ուղիւ հաւատով ի ֆրիստոս ննջեցին, զՏէր  
աղաչեսցուք: Յիշեա Տ՛ր եւ:

Էւ եւս եւ վն: Չանձինս մեր: Ողորմեաց:  
Քնն - Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղբիւ քննելոյ զգերեզմանն:

Օրհնեալ ես Տէր Աստուած մեր, որ ստեղծեր:  
Խաղաղութիւն քնն ամենեցուն:

Տէր մեր եւ փրկիչ Յս քն Որդի Աստուծոյ կենդ:  
Չայլն ամենայն րեւ խորքս յեր. 55 - 60.  
Երդ. Փառաց ի փառս: Ապա մղն. քրդ. եւ աղբիւ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

Տեսանազրութիւն գերեզմանի:

Սրի. եւ եւս խաղաղ: Քնն. Օրհնութի եւ:  
Օրհնեսցի քնն եւ կնքեալ պահեսցի գերեզմ:

Սրի. եւ եւս խաղաղ: Քնն. Օրհնութի եւ:  
Օրհնեսցի քնն եւ կնքեալ պահեսցի շերիմ եւ:

Սրի. եւ եւս խաղաղ: Քնն. Օրհնութի եւ:  
Օրհնեսցի քնն եւ կնքեալ պահեսցի դամբար:

Սրի. եւ եւս խաղաղ: Քնն. Օրհնութի եւ:  
Անշարժ եղեցի կնիք քնն տերութեան ի վերայ

գերեզմանի ծառայիս Աստուծոյ մինչեւ ի դա-  
լուսան ֆրիստոսի, որ եկեալ միւսանդամ նորո-  
գեսցէ փառք ի փառս Հօր եւ Որդ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:



# ԿԱՆՈՆ ՏՈՒՆ ՕՐՀՆԵԼՈՅ .

## Ի ՏՈՒՆ ԵՆՏԵՆՈՒԹԵԱՆ .

Սրէ՛ . Եւ եւս խաղաղու : Բ՛ն . Օրհնութիւն  
եւ փառք Հօր : Ե- սէն

### Հարական Դ2 :

Լ՛ոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար եւ մար-  
մնացար ի սուրբ կուսէն . զի վերըտին նորո-  
գեացես զանկանեանն Ա՛դամ : Դո՛ւ Ա՛ստուած  
ի յերկրի՛ երեւեցար եւ ընդ մարդկան շըջե-  
ցար . եւ փրկեցեր ըզտիեղերըս յանիծիցն  
Ա՛դամայ : Բե՛ղ ի յերկնից վեկայեալ Հօր քո՛յ  
ձայն . սսէ դա՛ է իմ Ո՛րդի . եւ սուրբ Հոգի՛ն ըզ-  
քեզ յայտնեաց անկանակերպ երեւմամբ :

Մըկըրտի՛ Բրիստոն եւ սըրբին ամենայն ան-  
րանք . եւ սայ մեզ թո՛ղութիւն մեղաց .  
ջրով եւ Հոգւով վերասրբելով ըզմեզ :

### Ա՛լէլուիա . ալէլուիա .

Տուն Իսրայելի օրհնեցէք զՏէր . տուն Ա՛հա-  
րոնի օրհնեցէք զՏէր : Տուն Ղեւեայ օրհնեցէք  
զՏէր . երկիւղածք Տեառն օրհնեցէք զՏէր :

### Ալէլուիա . սրթիւ :

Ա-եդարան ըստ Մարթիոսի : Գ . 13 :

՛ Ըանն միրտութեան Տն մերոյ Յիի Բնի :

Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլէէ ի Յոր-  
դանան առ Յովհաննէս՝ մկրտել ի նմանէ : Եւ

Յովհաննէս արգելլու զնա եւ ասէ . ինձ պիտոյ  
է ի քէն մկրտել եւ դու առ ին դաս : Պատաս-  
խանի ետ Յիսուս եւ ասէ ցնա . թոյլ տուր այժմ ,  
զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդա-  
րութիւն . եւ ապա թոյլ ետ նմա : Եւ իբրեւ  
մկրտեցաւ Յիսուս , եւ վաղվաղակի ի ջրոյ անտի .  
եւ ահա բացան նմա երկինք . եւ ետես զՀոգին  
Աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի , եւ գայր  
ի վերայ նորա : Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր .  
դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ : 17 :

Փառք քեզ Տէր Աստուած մեր :

### Բարող :

Սրէ՛ . Սուրբ խաչեւս աղաչեսցուք . երեւ 168 :  
Բ՛ն . Պահպանեա , Բրիստոս Աստուած մեր ,  
զընակարանս եւ զընակիչս սորա՝ ընդ Տոլան :

Օրհնեալ Տէր մեր : Հայր մեր :

## Ի ՏՈՒՆ ԶԱՏԿԻՆ .

Սրէ՛ . Եւ եւս խաղաղու : Բ՛ն . Օրհնութիւն  
եւ փառք Հօր : Ե- սէն

### Հարական Ա2 :

Այսօր յարեալ ի մեռելոց փեսայն անմահ  
եւ երկնաւոր . քեզ անտի՛ք խնդութեամն .  
հարսն ի յերկրէ՛ եկեղեցի . \* օրհնեալ ի ձայն  
յբնձութեան զԱստուած քո՛ Սինդն : Այսօր  
անձառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկու-  
նըս քո . լուսանորեալ՝ Երոսողէ՛մ . քանզի  
յարեալ լոյս քո՛ Բրիստոս . օրհնեալ : Այսօր

խաւարն անգիտութեան հարածեցնւ երբեմն  
լուսովն. եւ քեզ ծագեալց լոյս զխտութեանն.  
յարուցեանն ի մեռելոց Բրիստոս. օրհնեա:

Ալէլուիա. ալէլուիա.

Տուն Իսրայելի օրհնեցէք զՏէր. տուն Ահա-  
րոնի օրհնեցէք զՏէր: Տուն Ղեւեայ օրհնեցէք  
զՏէր. երկիւղածք Տեառն օրհնեցէք զՏէր:

Ալէլուիա. օրթիւ:

Աւետարան ըստ Մարկոսի: ԻԸ. 16:

† Յեա յարութեան Տեառն մերոյ Յնի Բնի:

Խոկ մեռաւան աշակերտքն գնացին ի Գալի-  
լեա ի լեառնն՝ ուր ժամագիր եղեւ նոցա Յի-  
ուս: Իբրեւ տեսին զնա՝ երկիր պագին նմա,  
եւ ոմանք յերկուացան: Եւ մատուցեալ Յիսուս  
խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. տուաւ ինձ ամե-  
նայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի. որպէս  
առաքեաց զիս Հայր՝ եւ ես առաքեմ զձեզ:  
Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն  
հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հոր եւ  
Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Ուսուցէք նոցա պա-  
հել զամենայն օր ինչ պատուիրեցի ձեզ. եւ  
ահաւաստիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս  
մինչեւ ի կատարած աշխարհի: 20:

Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սբի. Սբի խաչիւս. եր. 168: ԲԷՆ. Պահպանեա:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:



No. 2. 29×18½ centimètres.



Sainte Elisabeth,

Gravure par A. Rordorf.

Grandeur du papier 55×40 centimètres.

Prix: Fr. 2. —

54 *Charles & Nicolas Benziger frères à Einsiedeln.*

No. 6.  $35\frac{1}{2} \times 28$  centimètres.



Jour de fête.

*Gravure par N. Barthelmess.*

Grandeur du papier  $69 \times 52$  centimètres.

Prix: Fr. 4. 50 Cts.

ՄԲ Հայագիտական գրադարան



MAL032811

1000